

Կա՛ն իրատեսական այլընտրանքներ

Ջին Շարփ

Ալբերտ Էնշտեյնի ինստիտուտ

Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտի առաքելությունը

Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտի առաքելությունն է ողջ աշխարհում խթանել հակամարտություններում ոչ-բռնի պայքարի ուսումնասիրությունները և ռազմավարական կիրառությունը:

Ինստիտուտի արժեքներն են՝

- պաշտպանել ժողովրդավարական ազատություններն ու հաստատությունները,
- դիմադրել կեղեքմանը, բռնատիրությանը, ցեղասպանությանը և
- նվազեցնել բռնության կիրառումը որպես քաղաքականության գործիք:

Ինստիտուտի առաքելությունն իրագործվում է երեք եղանակով՝

- խրախուսել ոչ-բռնի պայքարի մեթոդների և հակամարտություններում դրանց կիրառության վերաբերյալ հետազոտությունների և քաղաքականության ուսումնասիրությունների իրականացումը,
- հանրամատչելի դարձնել այդ ուսումնասիրությունների արդյունքները հրապարակումների, համաժողովների, լրատվամիջոցների միջոցով և
- խորհրդատվություն տրամադրել հակամարտություններում ներգրավված անձանց ոչ-բռնի պայքարի ռազմավարական ներուժի վերաբերյալ:

Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտ
Նյուբերի փողոց 427
Բոստոն, Մասաչուսեթս, 02115-1802, ԱՄՆ

Կա՛ն իրատեսական այլընտրանքներ

Հրատարակության մեջ զետեղված նյութերը համարվում են հանրային սեփականություն և կարող են վերարտադրվել առանց Ջին Շարփից թույլտվության: Հեղինակը կգնահատի հղումն աղբյուրին:

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում
Առաջին հրատարակությունը՝ 2003թ. ապրիլ
Երկրորդ հրատարակությունը՝ 2003թ. դեկտեմբեր
Երրորդ հրատարակությունը՝ 2011թ. փետրվար

ISBN 1-880813-12-2

Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտ
Նյուբերի փողոց 427
Բոստոն, Մասաչուսեթս 02115-1801, ԱՄՆ
Հեռ` ԱՄՆ + 617-247-4882
Ֆաքս` ԱՄՆ + 617-247-4035
Էլ-փոստ` einstein@igc.org
Վեբկայք` www.aeinstein.org

Գրքույկի թարգմանությունը հնարավոր է դարձել Թեղուտի պաշտպանության
քաղաքացիական նախաձեռնության շնորհիվ
Էլ-փոստ` save@teghut.am
Վեբկայք` www.teghut.am,
FB Save Teghut

Բովանդակություն

Բովանդակություն.....	5
Գլուխ I.....	7
Ինչպես ստեղծել իրատեսական այլընտրանքներ պատերազմին և այլ բռնամիջոցներին	7
Հակամարտելու միջոցի անհրաժեշտությունը.....	8
Կա պայքարի այլ միջոց.....	10
Ոչ-բռնի պայքարների օրինակներ.....	11
Ոչ-բռնի պայքարի բնութագրիչներն ու մեթոդները.....	14
Թյուր պատկերացումներ.....	15
Հաջողության համար պահանջվող հանգամանքներ.....	16
Ռեպրեսիա և քաղաքական ջու-ջիցու.....	17
Հակառակորդի ուժի թուլացում.....	18
Հաջողության հասնելու չորս եղանակ.....	20
Պայքարի վերամշակված եղանակների կիրառումները.....	21
Ինչպես նվազեցնել ապավինումը պատերազմին և այլ բռնամիջոցներին.....	22
Գլուխ II.....	24
Ոչ-բռնի պայքարում ռազմավարական պլանավորման կարևորությունը.....	24
Ռազմավարության կարևորությունը.....	24
Խելացի ռազմավարությունների ձևակերպումը.....	26
Պլանավորման և գործողության մակարդակները.....	27
Ոչ-բռնի ռազմավարության մի շարք առանցքային տարրեր.....	29

Գլուխ III.....	31
Բռնատիրական վարչակարգերի դեմ ոչ-բռնի պայքարի ռազմավարական պլանավորման քայլերը	31
Ռազմավարական պլանավորման տարրերը.....	32
Հավելված I.....	36
Ոչ-բռնի պայքարում կիրառվող կարևոր եզրույթների բառարան	36
Հավելված II	44
Ոչ-բռնի պայքարի 198 մեթոդ.....	44
Բողոքի ոչ-բռնի արտահայտման եվ համոզելու մեթոդները.....	44
Սոցիալական անհամագործակցության մեթոդներ	46
Տնտեսական անհամագործակցության մեթոդներ	46
Տնտեսական անհամագործակցության մեթոդներ	47
Քաղաքական համագործակցության դադարեցման մեթոդները.....	48
Խաղաղ միջամտության մեթոդները	50
Հավելված III.....	52
Հավելյալ գրականություն.....	52
Երախտիքի խոսք	55
Հեղինակի մասին.....	57

Գլուխ I

Ինչպես ստեղծել իրատեսական այլընտրանքներ պատերազմին և այլ բռնամիջոցներին

Հասարակությունում և քաղաքականության մեջ բռնությունը՝ լինի դա պատերազմի, ահաբեկչության, կեղեքման (oppression), դիկտատուրայի¹, ուզուրպացիայի (թրգմ.՝ կառավարման մարմինների յուրացման), թե ցեղասպանության տեսքով, համընդհանուր կերպով ճանաչված է որպես լրջագույն խնդիր:

Բռնության կամ դրա հատկապես որոշ արտահայտումների խնդիրը լուծելու բոլոր առաջարկները մինչ օրս անհաջողության են մատնվել: Հավանական է, որ խնդիրը չլուծված է մնում, քանի որ այդ լուծումները հիմնված են եղել խնդրի բնույթի ոչ բավարար ճանաչման վրա: Առանց հասկանալու խնդիրը՝ դժվար, եթե ոչ անհնար, է լուծել այն:²

Այս էսսեի նպատակն է այլ տեսանկյունից ուսումնասիրել հասարակությունում և քաղաքականության մեջ այդքան լայնատարած երևույթի՝ բռնության էությունը և առաջարկել դրա լուծման այլ ուղիներ:

Անհրաժեշտ է նախ վերլուծել այն պայմանները, որոնց առկայության դեպքում հնարավոր կլինի կտրուկ կերպով նվազեցնել հակամարտությունների լուծումը ռազմական կամ այլ բռնի եղանակով: Պետք է ուսումնասիրել, թե ինչու է բռնությունն այդքան լայնորեն համարվում անհրաժեշտություն՝ ինչպես բարի, այնպես էլ՝ չար նպատակներում և թե ինչպես կարելի է հիմնովին ձերբազատվել այս ախտանիշից:

Այս էսսեի տեսանկյունը թեև պարզ է, սակայն հիմնորոշ է քաղաքական և միջազգային հակամարտություններում բռնության խնդիրը լուծելու համար:

Պետք է ընդունել, որ հասարակությունում և քաղաքականության մեջ հակամարտություններն անխուսափելի են և շատ դեպքերում նույնիսկ ցանկալի են:

¹ Ծանոթագրություն թարգմանչից. դիկտատուրան (dictatorship) ընդունված է թարգմանել «բռնատիրություն», «բռնապետություն», «բռնակալություն», հանդիպում է նաև «հրամայավարություն» տարբերակը: Դեսպոտիզմ, տիրանիա և ուզուրպացիա (despotism, tyranny, usurpation) բառերից զանազանելու նպատակով գրքույկում կպահպանվի փոխառված՝ «դիկտատուրա» բառը, երբեմն կօգտագործվի «հրամայավարություն» թարգմանությունը, իսկ «դիկտատոր» բառի դեպքում կօգտագործվի ինչպես փոխառությունը, այնպես էլ՝ «բռնակալ» բառը:

² «Բռնությունն» այստեղ կիրառվում է ոչ թե որպես բարոյական եզրույթ կամ քաղաքական կարծիք, այլ հետևյալ հստակ սահմանմամբ. անձանց նկատմամբ ֆիզիկական բռնություն՝ նրանց վնասվածք կամ մահ պատճառելու նպատակով կամ գործողություն, որը հիմնված է նման արդյունքի հանգեցնող սպառնալիքի վրա:

Որոշ հակամարտություններ հնարավոր է լուծել մեղմ միջոցներով, ինչպիսիք են՝ բանակցությունները, երկխոսությունը, հաշտեցումը. եղանակներ, որոնք ենթադրում են փոխզիջումներ: Սրանք իրագործելի են, երբ խնդրո առարկան հիմնորոշ չէ: Նույնիսկ այս դեպքերում բանակցությունների միջոցով հակամարտության լուծման վրա ավելի շուտ ազդում են հակառակորդների հարաբերական ուժային կարողությունները, քան արդարության մասին համատեղ ողջամիտ գնահատականը:

Սակայն շատ հակամարտություններում վտանգված են լինում կամ համարվում հիմնորոշ հարցեր: Սրանք «սուր հակամարտություններն են», որոնց համար փոխզիջումային ոչ մի լուծում ընդունելի չէ:

Սուր հակամարտություններում կողմերից առնվազն մեկն անհրաժեշտ կամ ճիշտ է համարում հակամարտել թշնամական հակառակորդի դեմ: Սուր հակամարտությունները մղվում են ազատություն և արդարություն հաստատելու, կրոնը կամ սեփական քաղաքակրթությունը պաշտպանելու կամ տարածելու, թշնամական բռնությանը դիմակայելու կամ հաղթահարելու նպատակով: Թշնամական բռնություն կարող է կիրառվել կեղեքելու, անարդարություն կամ դիկտատուրա հաստատելու նպատակով: Թշնամական բռնությունը կարող է կիրառվել նաև իբրև հարձակում որոշակի մարդկանց բարոյական կամ կրոնական սկզբունքների կամ մարդկային արժանապատվության վրա կամ նույնիսկ նրանց ժողովրդի գոյատևմանը սպառնալու նպատակով:

Սուր հակամարտություններում կողմերից առնվազն մեկը համարում է, որ հանձնվելը, կապիտուլյացիան կամ պարտությունը աղետալի են իր սկզբունքների, համոզմունքների, ողջ հասարակության և երբեմն՝ կյանքի շարունակության համար: Նման դեպքերում մարդիկ համարում են, որ հնարավորինս ուժգին հակամարտելն անհրաժեշտություն է:

Հակամարտելու միջոցի անհրաժեշտությունը

Պատերազմը և այլ բռնամիջոցներ կիրառվել են բազմատեսակ նպատակներով, սակայն սուր հակամարտություններում քաղաքական կամ միջազգային բռնությունը ծառայել է որպես ազնիվ ու վեհ համարվող նպատակներ պաշտպանելու կամ առաջ մղելու միջոց: Բռնությունը համարվել է մեծ չարիքին պասիվորեն հանձնվելուն անհրաժեշտ այլընտրանք:

Քաղաքական շատ համակարգերում պատերազմն ու այլ բռնամիջոցները ծառայում են որպես «վերջին պատժամիջոց»: Այսինքն՝ բռնության այս տեսակները համարվում են որպես վերջին միջոց, գործողության ամենահուժկու եղանակ, ճնշում, պատիժ կամ ուժ դրսևորելու ծայրագույն եղանակ, երբ ավելի մեղմ միջոցները համարվել են

ձախողված կամ ձախողման ենթակա: Բռնությունն այսպիսով կիրառվում է հանուն ամեն ազնիվ ու արժեքավոր բանի առաջմղման ու պաշտպանության:

Մինչև չգիտակցենք բռնության այս դերակատարումը, հնարավոր չի լինի սուր հակամարտություններում ավելի պակաս չափով ապավինել պատերազմի և այլ բռնամիջոցների վրա:

Երբ հակամարտություններում վտանգված են հիմնորոշ երևույթներ, միամտություն կլինի կարծել կամ գործել այնպես, թե իբր բանակցությունների կամ երկխոսության առաջարկը համարժեք արձագանք է իրավիճակին: Թշնամաբար տրամադրված հակառակորդներն ամենայն հավանականությամբ չեն հրաժարվի իրենց նպատակներից կամ պայքարի միջոցներից: Այս իրավիճակում ողջամիտ չէ նպատակադրվել դեպի «հաղթանակ-հաղթանակ» լուծումը: Բռնակալներն ու ցեղասպանություն սանձահարողներն արժանի չեն որևէ բան հաղթելու:

Տասնյակ տարիների ընթացքում կուտակված ապացույցներ կան, որ հակամարտություններում կիրառվող բռնությունը չի վերանում դրանց դեմ ցույցերով: Սուր հակամարտությունների ժամանակ մարդկանց մեծամասնությունը չի մերժի պատերազմն ու այլ բռնամիջոցներն այն պատճառով, որ համարում է կամ այլոք ասում են, թե նման բռնությունը դեմ է բարոյական կամ կրոնական սկզբունքների: Հակառակն ակնկալելը անիրատեսական կլինի:

Շուրջ քառասուն տարի առաջ հոգեբույժ Ջերոմ Ֆրենքը մեզ հիշեցրեց, որ մարդկանց մեծ մասի համար խաղաղությունն ամենաբարձր արժեքը չէ:³

Անհատները, մարդկանց խմբերն ու կառավարությունները չեն հրաժարվի բռնությունից, երբ դա ընկալվում է որպես թուլության և հուսալքության դրսևորում մի հակամարտության մեջ, որտեղ հարձակման են ենթարկվել կամ թվում է, թե հարձակման են ենթարկվել նրանց հիմնորոշ համոզմունքները և հասարակության բուն էությունը: Որպեսզի սուր հակամարտություններում պատերազմն ու այլ բռնամիջոցները չկիրառվեն որպես սեփական սկզբունքները, իդեալները, հասարակությունը կամ գոյությունը պաշտպանելու կամ առաջ տանելու վերջին միջոց, հուժկու գործողության այլընտրանքային միջոցներ պետք է գոյություն ունենան: Պետք է հակամարտությունը հզոր կերպով վարելու փոխարինող միջոցներ լինեն, որոնք բռնի տարբերակին համարժեք կամ ավելի մեծ հաջողության հավանականություն ունենան:

³ Ջերոմ Ֆրենք, «Հոգեբանական խնդիրները պատերազմի վերացման հարցում», «Համաշխարհային երրորդ պատերազմի կանխման մի քանի առաջարկ» գրքում, Նյու Յորք, Միմոն և Շուստեր հրատարակչություն, 1962թ.

Անհրաժեշտությունից ելնելով՝ նման ֆունկցիոնալ այլընտրանքը պետք է ի վիճակի լինի բավարար կերպով լուծելու այն «սուր խնդիրները», որոնց համար նախկինում բռնության կիրառումը համարվել է որպես պահանջվող միջոց: Այս «սուր խնդիրների» թվում են՝ դիկտատուրաների, արտաքին ներխուժումների և բռնագավթումների, ներքին ուժուրպացիաների (կառավարման մարմինների յուրացում), կեղեքման, ցեղասպանության փորձերի, զանգվածային վտարումների և սպանությունների դեմ հակամարտությունները:

Մի շատ կարևոր հուշում, որ նման այլընտրանք գոյություն ունի, այն փաստն է, որ նույնիսկ բռնատիրությունների ուժը սնվում է հասարակության մեջ գտնվող ուժի աղբյուրներից, որոնք էլ իրենց հերթին կախված են բազմատեսակ հաստատությունների և մարդկանց համագործակցությունից. մի երևույթ, որը կարող է շարունակվել կամ չշարունակվել, ինչը մենք ավելի մանրամասն կքննարկենք ստորև:

Կա պայքարի այլ միջոց

Բռնի հակամարտության փոխարինման իրատեսական տարբերակ գոյություն ունի: Հաճախ է մոռացվում, որ պատերազմն ու այլ բռնամիջոցները սուր հակամարտություններ վարելու հարցում համընդհանուր մոտեցում չեն եղել: Բազմաթիվ իրավիճակներում, տարբեր դարաշրջաններում և մշակութային համատեքստերում հաճախ կիրառվել է պայքարի այլ միջոց: Այս միջոցը բնավ հիմնված չի եղել ապտակից հետո մյուս այտը հակառակորդին դեմ տալու վրա, այլ՝ համառ լինելու և ուժեղ հակառակորդին ուժգին կերպով դիմադրելու կարողության վրա:

Մարդկային պատմության ընթացքում բազմաթիվ հակամարտություններում կողմերից մեկը պայքարը մղել է ոչ թե բռնությամբ, այլ՝ հոգեբանական, սոցիալական, տնտեսական և քաղաքական մեթոդներով կամ այս բոլորի համատեղմամբ: Հակամարտության այս տեսակը չի կիրառվել պարզապես այն դեպքերում, երբ վտանգի ենթարկված հիմնախնդիրները հարաբերականորեն նեղ են եղել, իսկ հակառակորդները՝ հարաբերականորեն պարկեշտ: Շատ դեպքերում պայքարի այս այլընտրանքային ձևը կիրառվել է այն ժամանակ, երբ վտանգված են եղել հիմնորոշ խնդիրներ/իրավունքներ և երբ անգույթ հակառակորդները պատրաստակամ և ի վիճակի են եղել կիրառել ծայրահեղ բռնաճնշում (ռեպրեսիա): Բռնաճնշման եղանակներից են եղել մահապատիժները, ծեծերը, ձերբակալումներն ու զանգվածային ջարդերը: Եվ չնայած նման բռնաճնշումներին, երբ դիմադրողները շարունակել են կռվել միայն իրենց ընտրած ոչ-բռնի զենքերով, հաճախ նրանք հաղթանակի են հասել:

Այս եղանակը կոչվում է ոչ-բռնի⁴ պայքար: Ահա սա է «մյուս ծայրահեղ միջոցը»: Սուր հակամարտություններում այն ունի պատերազմին և այլ բռնամիջոցներին այլընտրանք լինելու ներուժը:

Ոչ-բռնի պայքարների օրինակներ

Ոչ-բռնի պայքարներ լայնորեն մղվել են բազմազան մշակույթներում, տարբեր պատմական ժամանակաշրջաններում և քաղաքական պայմաններում: Դրանք տեղի են ունեցել ինչպես այսպես կոչված՝ «արևմուտքում», այնպես էլ՝ «արևելքում»: Ոչ-բռնի պայքարներ մղվել են նաև արդյունաբերականացած և ոչ արդյունաբերականացած երկրներում: Դրանք կիրառվել են ինչպես սահմանադրական ժողովրդավարություններում, այնպես էլ՝ կայսրությունների, օտարերկրյա զավթիչների և բռնատիրական համակարգերի դեմ: Ոչ-բռնի պայքարը մղվել է հանուն բազմատեսակ գաղափարների ու խմբերի և նույնիսկ այնպիսի նպատակներով, որոնք շատերի համար մերժելի են: Ոչ-բռնի պայքարը կիրառվել է ինչպես փոփոխություն կանխելու, այնպես էլ՝ փոփոխություն մտցնելու համար: Ոչ-բռնի պայքարը երբեմն զուգակցվել է սահմանափակ բռնությամբ:

Պայքարի մղող հիմնախնդիրները տարբեր են եղել՝ սոցիալական, տնտեսական, էթնիկ, կրոնական, ազգային, հումանիտար և քաղաքական. մանր խնդիրներից՝ մինչև հիմնարար խնդիրներ: Չնայած պատմաբանները հիմնականում անտեսել են պայքարի այս տեսակը, այն ակնհայտորեն շատ հին երևույթ է: Պայքարի այս եղանակին վերաբերող պատմության մեծ մասն, անկասկած, կորել է, իսկ այն մասը, որը դեռ պահպանվել է, մեծամասամբ անտեսվել:

Ոչ-բռնի պայքարի կիրառման շատ դեպքեր կա՝ մ քիչ առնչություն են ունեցել կառավարությունների հետ կա մ առնչություն չեն ունեցել ընդհանրապես: Դրանցից են՝ աշխատավորներին վերաբերող պայքարների շատ դեպքեր կամ սոցիալական կոնֆորմիզմին (թրգմ.՝ հարմարվողականություն) դիմադրելու կամ այն պարտադրելու ջանքեր: Ոչ-բռնի պայքարները մղվել են էթնիկ և կրոնական հակամարտություններում և բազմաթիվ այլ իրավիճակներում, ասենք՝ ուսանողների և համալսարանական ղեկավարների միջև: Մեծ թիվ են կազմում նաև քաղաքացիական բնակչության և կառավարությունների միջև սուր հակամարտությունները, երբ կողմերից մեկը մղել է ոչ-բռնի պայքար: Ստորև բերվող օրինակներից շատերը հենց այս տեսակի են:

⁴ Թեև հայերենում ընդունված կլինեք առանձին գրել «ոչ բռնի», փիլիսոփայական և հատկապես հեգելյան՝ «թեզ, անտիթեզ, սինթեզ» սկզբունքի նկատառումներով թարգմանիչը ներմուծում է բառիմաստի ընդլայնմամբ օժտված նոր բառեր՝ «ոչ-բռնի» և «ոչ-բռնություն», որոնք գրվում են գծիկով:

Տասնութերորդ դարի վերջերից մինչև քսաներորդ դար ոչ-բռնի պայքարը լայնորեն կիրառվել է բազմատեսակ հակամարտություններում. գաղութային ապստամբություններ, միջազգային քաղաքական և տնտեսական հակամարտություններ, կրոնական հակամարտություններ, ստրկության դեմ դիմադրություն: Պայքարի այս եղանակը կիրառվել է աշխատավորների ինքնակազմակերպվելու իրավունքներն ապահովելու, կանանց իրավունքներն ապահովելու, ընտրելու համընդհանուր իրավունքը հաստատելու, կանանց՝ ընտրելու իրավունքը հաստատելու նպատակներով: Պայքարի այս ձևն օգտագործվել է ազգային անկախություն ձեռք բերելու, տնտեսական օգուտներ ստանալու, ցեղասպանությանը դիմադրելու, բռնատիրություն տապալելու, քաղաքացիական իրավունքներ նվաճելու, խտրականությանը վերջ տալու, արտաքին օկուպացիաներին ու ռազմական հեղաշրջումներին դիմադրելու նպատակներով:

Քսաներորդ դարի սկզբում ոչ-բռնի պայքարի տարրերով հարուստ էր 1905թ ռուսական հեղափոխությունը: Գործադուլների ու տնտեսական բոյկոտի ճանապարհով են անցել արհեստակցական միություններն աշխարհի տարբեր երկրներում: Գերմանացիները ոչ-բռնության ուղին բռնեցին 1920թ. Կապպ Պուտչի դեմ և 1923թ. Ռուրի ֆրանս-բելգիական օկուպացիայի դեմ պայքարներում: 1908թ. , 1915թ. և 1919թ. չինացիները բոյկոտեցին ճապոնական ապրանքերը: 1920-ական և 1930-ական թվականներին հնդիկ ազգայնականները Մոհանդաս Գանդիի գլխավորությամբ ոչ-բռնի պայքար էին մղում բրիտանական լծից ազատվելու համար:

1940-1945թթ. եվրոպական տարբեր երկրներում, մասնավորապես՝ Նորվեգիայում, Դանիայում և Նիդեռլանդերում ժողովուրդը ոչ-բռնի պայքարի միջոցով էր դիմադրում նացիստական բռնազավթմանն ու լծին: Ոչ-բռնի պայքար մղվել է հոլոքոստից հրեաներին փրկելու համար, մասնավորապես՝ Բեռլինում, Բուլղարիայում, Դանիայում և այլուր: Սալվադորի և Գվատեմալայի ռազմական բռնակալները տապալվեցին 1944թ. գարնանը կարճատև ոչ-բռնի պայքարների արդյունքում: Միացյալ Նահանգներում քաղաքացիական իրավունքների շարժումը, որը ոչ-բռնի պայքարի միջոցով մարտնչում էր ռասսայական սեգրեգացիայի դեմ, կարողացավ 1950-60-ականներին փոխել Միացյալ Նահանգների հարավում երկար ժամանակներ հաստատված օրենքներն ու քաղաքականությունները: 1961թ. Ֆրանսիայի գաղութ հանդիսացող Ալժիրում ֆրանսահպատակ ժամկետային զինձառայողների անհամագործակցությունը զինված հեղաշրջում իրականացնող զենեթալների հետ՝ զուգակցված Ֆրանսիայում զանգվածային ցույցերով և Դեբրե-դը Գոլ կառավարության դիմադրությամբ, կարողացավ պարտության մատնել Ալժիրում ռազմական հեղաշրջման նախաձեռնողներին և կանխել նմանատիպ հեղաշրջում Փարիզում:

1968 և 1969թթ. Վարշավյան պակտի ներխուժումից հետո չեխերն ու սլովակները կարողացել են խորհրդային լիակատար վերահսկողությանը ութ ամբողջ ամիս

դիմադրել՝ ոչ-բռնի պայքարի և համագործակցելուց հրաժարվելու միջոցով: 1953-ից 1990թթ. Արևելյան Եվրոպայի կոմունիստական կառավարությունների, հատկապես՝ Արևելյան Գերմանիայի, Լեհաստանի, Հունգարիայի և բալթյան երկրների այլախոհներն անդադար ոչ-բռնի պայքարներ էին վարում հանուն ազատության: Լեհական «Սոլիդարնոստ» շարժումը, որ սկսվեց 1980թ. ազատ և օրինական արհմիությունների պահանջի գործադուլներով, 1989թ. ավարտվեց Լեհաստանում կոմունիստական վարչակարգի տապալմամբ: Ոչ-բռնի պայքարներն էին, որ կրկին վերջ տվին կոմունիստական բռնատիրությանը Չեխոսլովակիայում 1989թ. և Արևելյան Գերմանիայում, Էստոնիայում, Լատվիայում և Լիտվայում 1991թ. :

Մոսկվայում 1991թ. զինված հեղաշրջման փորձը ձախողվեց անհամագործակցության և բացահայտ մերժման շնորհիվ: Ոչ-բռնի ցույցերն ու զանգվածային դիմադրությունը մեծագույն նշանակություն ունեցան Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունում ապարթեյդի քաղաքականությունը և եվրոպական ազդեցությունը տապալելու հարցում՝ հատկապես 1950-ից 1990-ն ընկած ժամանակահատվածում: Ֆիլիպիններում Մարկոսի դիկտատուրայի վերջն եկավ 1986թ. ոչ-բռնի ըմբոստության շնորհիվ:

1988թ. հուլիսին և օգոստոսին Բիրմայի (նախկին Մյանմար) դեմոկրատները սկսեցին ռազմական դիկտատուրայի դեմ պայքարել քայլերթերի և անհնազանդության միջոցով, տապալեցին երեք կառավարություն, սակայն պայքարն ընդհատվեց ռազմական նոր հեղաշրջմամբ և զանգվածային բնաջնջմամբ: 1989թ. Չինաստանում ուսանողներն ու այլ քաղաքացիներն ավելի քան երեք հարյուր քաղաքներում (ներառյալ՝ Պեկինի Թիանանմեն հրապարակում) խորհրդանշական ցույցեր անցկացրին կոռուպցիայի ու կառավարության կողմից հարստահարման դեմ, սակայն այս ցույցերն ավարտվեցին զինուժի կողմից զանգվածային սպանություններով:

Կոսովոյում ալբանական բնակչությունը 1990-ից 1999թթ. մղում էր անհամագործակցության արշավ ընդդեմ սերբական բռնատիրական վարչակարգի: Երբ դե ֆակտո անկախ Կոսովոյի կառավարությունը չգիտեր, թե ինչպես ոչ-բռնի ռազմավարությամբ ձեռք բերի դե յուրե անկախություն, զինված գործողությունների սկսեց դիմել Կոսովոյի ազատագրման պարտիզանական բանակը: Սրան հաջորդեցին սերբական ծայրահեղ բռնաճնշումներն ու զանգվածային ջարդերն՝ այսպես կոչված՝ «Էթնիկ զտում» անվան տակ, որին էլ հաջորդեցին ՆԱՏՕ-ի ռմբակոծություններն ու միջամտությունը:

1996թ. նոյեմբերից սերբերը Բելգրադում սկսեցին ամենօրյա երթեր ու ցույցեր անցկացնել նախագահ Միլոշևիչի ավտորիտար կառավարության դեմ և կարողացան ընտրակեղծիքների արդյունքները շտկել 1997թ. հունվարին: Այդ ժամանակ, սակայն, Սերբիայի դեմոկրատները չունեին պայքարն առաջ մղելու ռազմավարություն և

չկարողացան Միլոշևիչի դիկտատուրան տապալելու գործողություն սկսել: 2000թ. հոկտեմբերին «Օտպոր» (դիմադրություն) շարժումն ու դեմոկրատական այլ ուժեր կրկին վեր բարձրացան Միլոշևիչի դեմ՝ այս անգամ զգուշորեն պլանավորված ոչ-բռնի պայքարի միջոցով, և Միլոշևիչի բռնատիրությունը փլուզվեց:

2001թ. սկզբներին Ֆիլիպիններում կոռուպցիայի մեջ մեղադրվող նախագահ Էստրադան պաշտոնազրկվեց «Ժողովրդի ուժը II» շարժման արդյունքում:

Այս բոլոր հակամարտությունները և դրանց արդյունքները հասկանալու համար պետք է հասկանալ պայքարի այս ձևի բնույթը:

Ոչ-բռնի պայքարի բնութագրիչներն ու մեթոդները

Այս տեսակի պայքարում բռնության փոխարեն մարդիկ գործադրել են երեք տեսակի վարքագիծ: Նախ, նրանք մասնակցել են բողոքի խորհրդանշական ցույցերի, ինչպիսիք են՝ երթերը, մոմավառությունները, թուղիկների բաժանումը, հատուկ գույների կրումը՝ ի նշան որոշակի նպատակի աջակցության կամ դիմադրության:

Երկրորդ, դիմադրողները մերժել են շարունակել համագործակցել կամ նոր համագործակցություն սկսել իրենց հակառակորդների հետ: Նրանք գործադրել են անհամագործակցություն, որը կրել է սոցիալական, տնտեսական և քաղաքական ձևեր: Օրինակ, դիմադրողները հակառակորդների նկատմամբ կիրառել են սոցիալական բոյկոտներ կամ հրաժարվել են մասնակցել տոնակատարությունների կամ հիշատակի միջոցառումների, կամ հրաժարվել են գնալ հանդիպումների կամ հաճախել դպրոցներ, որոնք նրանք համարել են հակառակորդին աջակցող:

Դիմադրողները հաճախ դադարեցրել են տնտեսական համագործակցությունը՝ հրաժարվելով մատակարարել կամ փոխադրել ապրանքներ և ծառայություններ կամ հրաժարվելով գնել կամ վաճառել ապրանքներ կամ նյութեր: Երբեմն հակառակորդ երկրի հետ տնտեսական հարաբերությունները դադարեցվել են կառավարությունների նախաձեռնությամբ: Սրանք բոլորը տնտեսական բոյկոտի ձևեր են:

Գործադուլները տարբեր տեսք են ունեցել, ինչպես օրինակ՝ կարճաժամկետ խորհրդանշական աշխատանքի դադարեցումից, մեկ գործարանի գործադուլից՝ մինչև զանգվածային համընդհանուր գործադուլներ կամ որևէ քաղաքի կամ երկրի տնտեսության կաթվածահարում:

Քաղաքական անհամագործակցության շարքում են՝ կեղծված ընտրությունների բոյկոտը, վարչակարգի լեգիտիմության մերժումը, անհնազանդությունը,

կառավարական աշխատողների անհամագործակցությունը և քաղաքացիական անհնազանդությունն «անբարո» օրենքներին:

Երրորդ, ակտիվ միջամտությունը և համակարգի նորմալ գործունեության խափանումը իրականացվել է հոգեբանական, սոցիալական, տնտեսական, ֆիզիկական և քաղաքական տարբեր ձևերով: Ոչ-բռնի միջամտության բազմաթիվ մեթոդներից են՝ գրասենյակների գրավումը (օկուպացիան), նստացույցերը փողոցներում, հացադուլները, նոր տնտեսական հաստատությունների ստեղծումը, ոչ-բռնի ներխուժումները, վարչական հաստատությունների գերբեռնումը, ձեռքակալվելուն ուղղված քայլեր կատարելը, զուգահեռ կառավարությունների ստեղծումը:

Ոչ-բռնի պայքարի մեթոդները դասակարգվում և բնութագրվում են ըստ գործողության տեսակի, այլ ոչ թե դրանք կիրառող մարդկանց շարժառիթների կամ համոզմունքների: Կարևոր է շեշտել, որ պայքարի այս եղանակը կիրառվել է բազմատեսակ համոզմունքներ ունեցող մարդկանց կողմից և ակնհայտորեն չի պահանջում ոչ-բռնության բարոյական կամ կրոնական համոզմունք, որը բոլորովին այլ երևույթ է: Հաճախ պայքարի մասնակիցները և առաջնորդները (եթե նրանց հնարավոր է եղել ճանաչել) գերծ են մնացել բռնությունից, քանի որ հասկացել են, որ դա և՛ անարդյունավետ է, և՛ ոչ պետքական: Այս գրքույթի հավելվածում զետեղված են ոչ-բռնի պայքարի 198 դասակարգված մեթոդներ, որոնց մասին մանրամասն և պատմական տեղեկություններ կան Ջին Շարփի «Ոչ-բռնի պայքարի քաղաքականությունը, Մաս 2, Ոչ-բռնի պայքարի մեթոդները» գրքում (հավելյալ գրականության մասին տեղեկություններ կան Հավելված 3-ում):

Թյուր պատկերացումներ

Ոչ-բռնի պայքարն ընկալելու վրա բացասաբար են ազդել լայնորեն տարածված թյուր և կեղծ պատկերացումները: Թույլ տվեք մի շարք ուղղումներ կատարել.

- Լայնորեն ընդունված է, թե իբր բռնությունն ավելի արագ է արդյունքի բերում և ոչ-բռնի պայքարը միշտ երկար է տևում: Այս երկու համոզմունքներն էլ սխալ են:
- Ոչ-բռնի պայքարը հաճախ ընկալվում է որպես թույլ պայքար, մինչդեռ այն կարող է շատ հզոր լինել: Այն կարող է կաթվածահար անել և նույնիսկ՝ կազմաքանդել ռեպրեսիվ վարչակարգերը:
- Ոչ-բռնի պայքարի համար չի պահանջվում խարիզմատիկ առաջնորդ:
- Ոչ-բռնի պայքարը բազմամշակութային երևույթ է:

- Ոչ-բռնի պայքարի համար չեն պահանջվում որևէ կրոնական համոզմունքներ (վստահաբար՝ ոչ կոնկրետ կրոնական համոզմունքներ), թեև երբեմն այն մղվել է կրոնական շարժառիթներով:
- Ոչ-բռնի պայքարը նույնը չէ, ինչ կրոնական կամ բարոյական սկզբունքներից բխող ոչ-բռնությունը. այն լիովին այլ երևույթ է: Այս տարբերակումը պետք է հստակ լինի և չանտեսվի:
- Չնայած լայնորեն համարվում է, որ պայքարի այս եղանակը կարող է հաջողության հասնել միայն մարդասեր և ժողովրդավարական հակառակորդների դեմ, այն իրականում հաջողություն է գրանցել նաև բռնի վարչակարգերի ու դիկտատուրաների՝ այդ թվում նացիստական և կոմունիստական դիկտատուրաների դեմ:
- Ասվում է, թե ոչ-բռնի պայքարը հաջողության է հասնում միայն հակառակորդների սրտերը հալեցնելով: Իրականում ոչ-բռնի պայքարն ունեցել է պարտադրանքի ուժ և նույնիսկ կարողացել է շարքից հանել ծայրահեղ բռնատիրություններ:

Հաջողության համար պահանջվող հանգամանքներ

Նմանատիպ պայքար մղելու ընտրությունը չի երաշխավորում հաջողություն, նույն կերպ ինչպես հաջողություն չի երաշխավորում բռնի պայքարի ընտրությունը: Այս տեսակի պայքարի միջոցով հաջողության հասնելու համար, սակայն, կան պահանջներ, ինչպես և՛ բռնի պայքարների դեպքում: Բռնությունից պարզապես հրաժարվելը և «ոչ-բռնի» բառն օգտագործելը չի բերի ցանկալի արդյունքների:

Անցյալում մղված որոշ ոչ-բռնի պայքարներ ձախողել են և չեն հասնել իրենց նպատակներին: Որոշները գրանցել են սահմանափակ հաղթանակներ: Երբեմն էլ հաղթանակը կարճատև է եղել, քանի որ մարդիկ այն չեն օգտագործել իրենց նվաճումները կոնսոլիդացնելու և ինստիտուցիոնալացնելու համար և ոչ էլ կարողացել են իրենց ազատությանը սպառնացող նոր վտանգներին արդյունավետորեն դիմադրել: Այլ դեպքերում էլ՝ մեկ պայքարում հաղթանակը ստիպել է հակառակորդին զիջումների գնալ, սակայն նպատակներին լիակատար կերպով հասնելու համար նոր պայքարներ են պահանջվել:

Որոշ դեպքերում, սակայն, խոշոր հաղթանակներ են գրանցվել այնպիսի հանգամանքներում, որ բռնությամբ դիմադրելու դեպքում չէին գրանցվի: Այս արդյունքներն ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է ընկալել ոչ-բռնի պայքարի բնույթը:

Չնայած ոչ-բռնի պայքարի «արդյունավետության» ձևերը զանազան դեպքերում տարբեր են, հատկանշական է ընդգծել երկու կարևորագույն գործընթաց, որը պետք է առկա լինի որոշ ոչ-բռնի հակամարտություններում, բայց՝ ոչ բոլորում: Դրանք են՝ (1) չհնազանդվելու և երբեմն ռեպրեսիաների արդյունքները շրջելու կարողությունը, և (2) հակառակորդի ուժի աղբյուրները թուլացնելու և դադարեցնելու կարողությունը:

Ռեպրեսիա և քաղաքական ջու-ջիցու

Բնականաբար բռնակալները աշախույժ են իրենց իշխանությանը սպառնացող գործողությունների և գաղափարների հանդեպ: Կեղեքիչները, հետևաբար, ավելի հավանական է, որ սկսեն սպառնալ և պատժել չհնազանդվողներին, գործադուլ անողներին կամ համագործակցությունից հրաժարվողներին: Սակայն ճնշումները և նույնիսկ բռնությունները միշտ չէ, որ առաջ են բերում ենթարկեցում և համագործակցություն, այսինքն՝ այն, ինչն անհրաժեշտ է, որպեսզի վարչակարգը շարունակի գործել:

Որոշ դեպքերում, բայց ոչ բոլոր դեպքերում, խիստ ռեպրեսիաները կարող են հանգեցնել մի գործընթացի, որն ընդունված է անվանել «քաղաքական ջու-ջիցու»:

Ոչ-բռնի պայքարի հետ առնչվելու՝ հակառակորդի դժվարությունները կապված են պայքարի այս եղանակի հատուկ դինամիկայի և գործընթացների հետ: Այն կիրառվում է այնպիսի հակառակորդների դեմ, որոնք ի վիճակի են և պատրաստակամ՝ կիրառելու բռնի պատժամիջոցներ: Սակայն բռնաճնշումների դեմ ոչ-բռնի եղանակներով մղվող քաղաքական պայքարը ստեղծում է հատուկ, ասիմետրիկ հակամարտության իրավիճակ: Ոչ-բռնի պայքարողները կարող են ոչ-բռնի միջոցների ասիմետրիան օգտագործել բռնի գործողությունների դեմ այնպես, որ իրենց հակառակորդներին դնեն մի քաղաքական իրավիճակի մեջ, որը նման կլինի ճապոնական «ջու-ջիցու» մարտարվեստին: Գործողության ձևերի միջև հակադրությունը զրկում է հակառակորդին քաղաքական հավասարակշռությունից՝ ստիպելով, որ նրա կիրառած բռնաճնշումը ետ վերադառնա իրեն և թուլացնի իր իսկ ուժը: Պայքարը շարունակելով, սակայն մնալով ոչ-բռնի եղանակներին հավատարիմ՝ դիմադրողները կարող են բարելավել իրենց ուժային դիրքերը: Այս գործընթացը կոչվում է քաղաքական ջու-ջիցու:

Քաղաքական ջու-ջիցուն առաջացնում է ավելի ու ավելի մեծ օտարում հակառակորդից: Դա տեղի է ունենում հետևյալ երեք խմբերից ցանկացածի կամ բոլորի հետ՝ հակառակորդ խմբի անդամների, զանգատվող բնակչության անդամների, հակամարտության մեջ չներգրավված երրորդ կողմերի հետ: Այս օտարումը կարող է նաև հանգեցնել հակառակորդի ճամբարում ավելի ու ավելի ուժգնացող ներքին հակադրություն: Այն նաև կարող է մեծացնել պայքարողների թիվը

և պայքարի ուժգնությունը: Այն նաև կարող է երրորդ կողմներին տրամադրել հակառակորդի դեմ՝ հոգուտ դիմադրողների:

Հակառակորդի ուժի թուլացում

Քաղաքական ջու-ջիցուն բոլոր իրավիճակներում կամ ոչ-բռնի պայքարի բոլոր դեպքերում չէ, որ կարող է գործել: Ոչ-բռնի պայքարի եղանակներից մյուսը հակառակորդի, նույնիսկ բռնակալի ուժի աղբյուրների թուլացումն է: Այս գործընթացն արդյունավետ է հատկապես այն պայքարներում, երբ նպատակ կա կառավարության վրա ճնշում գործադրել կամ պարտադրել վերջինիս՝ որևէ բան անել կամ չանել, կամ երբ նպատակը վարչակարգի կազմաքանդումն է:

Սկզբունքը շատ պարզ է. դիկտատորներին իշխելու համար անհրաժեշտ է ժողովրդի աջակցությունը, առանց որի նրանք չեն կարող ապահովել և պահել իրենց անհրաժեշտ քաղաքական ուժը: Քաղաքական ուժի աղբյուրները հետևյալն են՝

- Հեղինակություն (authority), կամ լեգիտիմություն:
- Մարդկային ռեսուրսներ. այն անձինք և խմբերը, որոնք ենթարկվում, համագործակցում կամ աջակցում են իշխողներին:
- Հմտություններ և գիտելիքներ, որոնք վարչակարգին անհրաժեշտ են և որոնք մատակարարվում են համագործակցող անձանց և խմբերի կողմից:
- Ոչ շոշափելի գործոններ. հոգեբանական և գաղափարախոսական գործոններ, որոնք մարդկանց մղում են ենթարկվելու և աջակցելու իշխողներին:
- Նյութական ռեսուրսներ. գույքի, բնական ռեսուրսների, ֆինանսական ռեսուրսների, տնտեսական համակարգի, հեռահաղորդակցության և տրանսպորտի միջոցների վերահսկողություն կամ հասանելիություն:
- Պատժամիջոցներ. կիրառվող կամ սպառնալիք հանդիսացող պատիժներ, որոնք վարչակարգի գոյության և քաղաքականության շարունակության համար ապահովում են անհրաժեշտ ենթարկեցումն ու համագործակցությունը:

Ուժի բոլոր այս աղբյուրները, սակայն, կախված են հետևյալ հանգամանքներից՝ վարչակարգին ընդունելուց, բնակչության ենթարկվածությունից ու հնազանդությունից և հասարակության տարբեր հաստատությունների ու անձանց համագործակցությունից:

Ուստի քաղաքական ուժի գորեղությունն ու գոյությունը միշտ կախված է իր աղբյուրների թարմացումից՝ բազմատեսակ հաստատությունների և մարդկանց համագործակցության միջոցով. համագործակցություն, որը կարող է շարունակվել կամ չշարունակվել: Քաղաքական ուժն, ուստի, միշտ փխրուն է և կախված է այն հասարակությունից, որի նկատմամբ այն կիրառվում է:

Այս անհրաժեշտ ենթարկվածությունն ու համագործակցությունը երաշխավորված չեն, և ուժի յուրաքանչյուր աղբյուր խոցելի է սահմանափակումների կամ կորուստների առումով: Ոչ-բռնի պայքարը կարող է անմիջապես թիրախավորել ուժի այս աղբյուրներից յուրաքանչյուրի առկայությունը: Կախված մի շարք հանգամանքներից՝ ուժի այս աղբյուրների մատակարարումը կարող է թուլացվել և նույնիսկ դադարեցվել:

Անհամագործակցությունը և մերժումը քայքայում են ուժի անհրաժեշտ աղբյուր ապահովող ենթարկվածությունն ու համագործակցությունը: Օրինակ, իշխողների լեգիտիմության մերժումը նվազեցնում է հնազանդության կարևորագույն պատճառներից մեկը՝ ինչպես պայքարի աջակիցների, այնպես էլ լայն հանրության շրջանում: Չանգվածային անհնազանդությունը և մերժումը ստեղծում են ուժի գործադրման հսկայական խնդիրներ: Չանգվածային գործադուլները կաթվածահար են անում տնտեսությունը: Լայնատարած վարչական անհնազանդությունը բյուրոկրատական համակարգին կարող է կանգնեցնել կառավարության գործունեությունը: Հակառակորդի ոստիկանության և զորքերի ըմբոստությունը կարող է քայքայել ոչ-բռնի պայքարողներին բռնաճնշելու և վարչակարգը պահպանելու կարողությունը:

Առանց ուժի այս աղբյուրների առկայության հակառակորդի ուժը թուլանում և ի վերջո վերանում է: Վարչակարգը մահանում է քաղաքական քաղցից:

Հակառակ լայն տարածված կարծիքի՝ նույնիսկ ամբողջատիրական դիկտատուրաները կախված են բնակչության և իշխվող հասարակությունների աջակցությունից, ինչպես դեռևս 1953թ. նշել է քաղաքագետ Կարլ Դոյչը:⁵

⁵ Կարլ Դոյչ, «Ճաքեր մոնոլիթում: Տոտալիտար համակարգերի կազմաքանդման հնարավորություններն ու օրինաչափությունները», Կարլ Ֆրիդրիխի խմբագրած՝ «Տոտալիտարիզմ» գրքում, էջ 308-333, Քեմբրիջ, Մասաչուսեթս, Հարվարդի համալսարանի հրատարակչություն, 1954թ.

Հաջողության հասնելու չորս եղանակ

Ոչ-բռնի հաջողված պայքարներն արդյունքի են հասել չորս հիմնական ձևերով: Գործունեության այս տարբեր ձևերը կախված են մեծապես հակամարտության կոնկրետ իրավիճակից, պայքարի առարկա հանդիսացող հիմնախնդիրներից, պայքարող բնակչության սոցիալական կառուցվածքից, հակառակորդների բնույթից, ընտրված հիմնական ռազմավարությունից (եթե այդպիսին կա), փոփոխության նախընտրելի մեխանիզմից, կիրառվող կոնկրետ մեթոդներից, պայքարողների հմտություններից, կարգապահությունից և համառությունից: Գործադրվող ճնշումները կարող են լինել հոգեբանական, սոցիալական, տնտեսական և քաղաքական՝ յուրաքանչյուրը տարբեր աստիճանի:

Բացի այդ ոչ-բռնի պայքարը կարող է ազդել սոցիալական կամ քաղաքական համակարգի կայունության վրա և փոխել դրա գործելակերպը: Որոշ հակամարտություններում ոչ-բռնի անհամագործակցությունն ու անհնազանդությունը կարող են խարխուլել հակառակորդի՝ իշխելու կարողությունը կամ նույնիսկ՝ կազմաքանդել վարչակարգը:

Տարբեր հակամարտություններում ոչ-բռնի պայքարը տարբեր կերպ է գործում: Օրինակ, աշխատավարձի բարձրացման պահանջով կազմակերպված գործադուլի դինամիկան շատ տարբեր է փոքրամասնություն հանդիսացող խմբի՝ ավելի լայն իրավունքներ նվաճելու համար պայքարից կամ դիկտատուրայի տապալմանն ուղղված պայքարից:

Հաջողության դեպքում փոփոխությունը կարող է առաջ գալ այս չորս մեխանիզմներից մեկի գործադրման արդյունքում: Հազվագյուտ դեպքերում ոչ-բռնի պայքարի արդյունքում տեղի են ունեցել վերաբերմունքի փոփոխություններ և հակառակորդները կամավոր զիջումներ են կատարել, քանի որ դա ճիշտ են համարել և *փոխակերպվել են*: Շատ ավելի հաճախ այնպես է պատահել, որ տնտեսական կամ քաղաքական համագործակցությունից հրաժարվելը ստիպել է հակառակորդին գալու փոխզիջման՝ *հարմարվելու*: Հաճախ անհնազանդությունն ու անհամագործակցությունն այնքան հզոր են եղել և այնքան հմտորեն թիրախված, իսկ հակառակորդի ուժի աղբյուրները՝ բավարար չափով թուլացված, որ հակառակորդին ոչինչ չի մնացել անելու, քան հանձնվելը: Սա եղել է *ոչ-բռնի հարկադրանք*: Սակավաթիվ դեպքերում անհնազանդությունն ու անհամագործակցությունը եղել են այնքան զանգվածային և հակառակորդի ուժի աղբյուրների դադարեցումը՝ այնքան լիակատար, որ վարչակարգը պարզապես մասնատվել է, *կազմաքանդվել*:

Պայքարի վերամշակված եղանակների կիրառումները

Արդյոք ոչ-բռնի պայքարի այս եղանակը կարո՞ղ է մեծապես նպաստել հասարակության և քաղաքականության մեջ բռնության խնդրի լուծմանը. այս հարցի պատասխանը շատ բանով կախված է այն հանգամանքից, թե արդյոք այն կարո՞ղ է սուր հակամարտությունների ժամանակ նվազեցնել ապավինումը բռնությանը: Կարո՞ղ է արդյոք այն բավարար արդյունավետ դառնալ, որպեսզի կիրառվի սուր հակամարտությունների ժամանակ բռնության փոխարեն: Որոշ դեպքերում շատերը հստակորեն կասեն՝ այո, այլ դեպքերում՝ կասեն՝ «միգուցե», «կասկածում եմ», «ոչ»: Պատասխանները մեծապես կախված կլինեն պատասխանողների ընկալման մակարդակից՝ թե ինչ է պայքարի այս եղանակը և դատողության այն մակարդակից, թե արդյոք ոչ-բռնի պայքարն ի վիճակի՞ է արդյունավետորեն փոխարինել բռնությանը սուր հակամարտություններում:

Հնարավորություններ կան պայքարի այս տեսակը դարձնելու ավելի արդյունավետ, քան այն եղել է նախկինում՝ իր իմպրովիզացված տարբերակներում: Սա հնարավոր է անել այս եղանակի կիրառման պահանջների մասին մեր գիտելիքներն ավելացնելու, դրանք լայնորեն տարածելու և հետագա սուր հակամարտություններում դրա կիրառման համար անհրաժեշտ ընդհանուր և հատուկ պլանավորումն ու ռազմավարությունը կատարելագործելու միջոցով:

Բռնության խնդրին բավարարող լուծման մշակումը և ոչ-բռնի պայքարի հետագա քաղաքական զարգացումների ուսումնասիրությունը պահանջում է, որ մենք ուշադրություն դարձնենք այս եղանակի ներկա և հետագա պոտենցիալ դերին: Սա հատկապես կարևոր է այն սուր հակամարտություններում, երբ շատ մարդիկ և կառավարություններ համարում են, որ անհրաժեշտ են ռազմական միջամտություններ և այլ բռնամիջոցներ: Ինքներս մեզ պիտի տանք հետևյալ հարցերը. որքանո՞վ կարող ենք հասկանալ և կատարելագործել պայքարի այս եղանակը և մինչև որտե՞ղ կարող է այն արդյունավետորեն փոխարինել բռնությանը:

Ոչ-բռնի պայքարի հետագա քաղաքական զարգացումը պետք է ներառի բռնությանն այլընտրանք համարվող ոչ-բռնի տարբերակներ հետևյալ տեսակի հակամարտություններում:

- դիկտատուրաների կազմաքանդում,
- ռազմական հեղաշրջումների արգելափակում և նոր դիկտատուրաների հաստատման կանխարգելում,
- պաշտպանություն արտաքին ագրեսիայից և զավթումից,
- տեղաբնակ ժողովուրդների գոյության և կենսակերպի պահպանում,

- սոցիալական և տնտեսական անարդարությունների վերացում,
- ժողովրդավարական պրակտիկաների և մարդու իրավունքների մշակում, պահպանում և ընդլայնում,
- ոչ-բռնի պայքարի միջոցների ներդրում ժողովրդավարական հասարակություններում:

Ինչպես նվազեցնել ապավինումը պատերազմին և այլ բռնամիջոցներին

Այս և այլ ընդհանուր նպատակներով և կոնկրետ հակամարտությունների համար պետք է մշակվեն պրակտիկ ռազմավարական պլաններ, որպեսզի ոչ-բռնի պայքարի տարբերակն արդյունավետորեն կիրառվի: Քանի որ սա աստիճանական գործընթաց է, հնարավոր կլինի սուր հակամարտություններում բռնությունը փուլ առ փուլ փոխարինել կատարելագործված ոչ-բռնի պայքարներով:

Այս մարտահրավերը լուծելու համար անհրաժեշտ է հավելյալ հետազոտությունների, վերլուծության, ստրատեգիական ուսումնասիրությունների, քաղաքականության մշակման, պլանավորման և խրախուսող գործողությունների միջոցով ուսումնասիրել և զարգացնել ոչ-բռնի պայքարի պոտենցիալը սուր հակամարտություններում:

Պատմաբանների, սոցիալական հոգեբանների, սոցիոլոգների, սոցիալական և քաղաքական տեսաբանների, քաղաքագետների, ռազմավարագետների և այլոց գործիքների կարիքը կա: Կարևոր է ոչ միայն ուսումնասիրել ոչ-բռնի պայքարը, այլև ուսումնասիրել այլ հարակից թեմաներ, ինչպիսիք են՝ դիկտատուրաների և հարստահարման այլ համակարգերի խոցելիությունները:

Կարևոր է նաև սովորել, թե ինչպես կարելի է զարգացնել ու տարածել ռազմավարական մտածողության և ռազմավարություններ պլանավորելու կարողությունը հետագա ոչ-բռնի պայքարներում:

Այս ջանքերի գործադրումը կպահանջի անցնել ժամանակակից հասարակությունում ընդունված կարևոր պրակտիկաներից և հզոր ազգային ու միջազգային ուժերից անդին և հաճախ՝ նույնիսկ գնալ նրանց հակընդդեմ: Ուժի կենտրոնացումը, միջպետական քաղաքականության ռազմականացումը, խնդրինք լուծելու ավանդական եղանակների հեգեմոնիան, այս և այլ հանգամանքներ կխանգարեն ոչ-բռնի պայքարի պոտենցիալ ակտուալության տրամաբանված դիտարկմանը:

Սակայն հիմքեր կան առաջարկելու, որ հասարակության ընտրությունը վերջին հաշվով ապավինելու բռնի, թե ոչ-բռնի պայքարին, ունի շատ կարևոր հետևանքներ նրա սոցիալական և քաղաքական կառուցվածքի վրա: Կան լուրջ նշաններ, որ բռնի

հակամարտությունները միտում ունեն ստեղծելու ավելի կենտրոնացված և պոտենցիալ իմաստով ավելի ռեպրեսիվ քաղաքական համակարգ, մինչդեռ ոչ-բռնի հակամարտությունները ստեղծում են ավելի ապակենտրոնացված և ժողովրդի կողմից վերահսկվող քաղաքական համակարգ: Ռազմական կարողությունը կարող է ներքին կիրառում ստանալ ժողովրդին բռնաճնշելու նպատակով, մինչդեռ ոչ-բռնի պայքարը կարող է բնակչության կողմից օգտագործվել ազատություններ նվաճելու և պաշտպանելու ու կենտրոնացված բռնաճնշումներին դիմադրելու նպատակով:

Ոչ-բռնի ճնշումներ գործադրելու միջոցների պոտենցիալ ակտուալության և կենսունակության ուշադիր և իրազեկված քննումը հավանական է, որ բացահայտի իրատեսական տարբերակներ, որ մինչ այդ ոչ բավարար չափով էին ուսումնասիրվել: Այս մոտեցումն ունի ժամանակակից քաղաքականության և միջազգային հարաբերություններում հիմնորոշ փոփոխություններ մտցնելու ներուժը՝ բռնությանն ապավինելը նվազեցնելու միջոցով:

Թե որքանով մեզ կհաջողվի հակամարտությունների բռնի ձևերը ոչ-բռնի ձևերով փոխարինել՝ այդպիսով արմատականորեն նվազեցնելով ապավինումը ռազմական և բռնի այլ եղանակներին, մեծապես կախված կլինի այն բանից, թե որքանով կկարողանանք մշակել և արդյունավետորեն կիրառել հակամարտությունների ոչ-բռնի այլընտրանքներ:

Անխուսափելի հարց է մնում. արդյոք փորձելով ենք կատարելագործել պայքարի այս եղանակը և հարմարեցնել ու որդեգրել այն հակամարտություններում կիրառելու համար, որպեսզի մարտահրավեր նետենք բռնության ծայրահեղ արտահայտումներին, վերացնենք դրանք կամ փոխարինենք արդյունավետ և զորեղ այլ պայքարով:

Գլուխ II

Ոչ-բռնի պայքարում ռազմավարական պլանավորման կարևորությունը

Ռազմավարության կիրառումը մեզ լավագույնս հայտնի է զինված հակամարտություններից: Դարեր շարունակ ռազմական սպաները ներգրավված են եղել ռազմական գործողությունների ռազմավարական պլանավորման մեջ: Նշանակալի մտածողներ, ինչպիսիք ենք Սուն Թզուն, Կլաուսևիցը և Լիդել Հարթը, վերլուծել և կատարելագործել են մարտական ռազմավարությունը: Սովորական զինված պատերազմներում և պարտիզանական պատերազմներում բարդ ռազմավարության կիրառումն արդյունավետության տարրական պահանջներից է:

Ինչպես արդյունավետ ռազմական պայքարն է պահանջում իսելացի ռազմավարություններ, պլանավորում և գործադրում, այնպես էլ ոչ-բռնի պայքարն առավելագույնս արդյունավետ կլինի, երբ այն գործի կուռ ռազմավարական պլանավորման հիմքերի վրա: Խելացի ռազմավարությունների ձևակերպումն ու որդեգրումը մեծապես կգորեղացնի ոչ-բռնի պայքարը:

Ռազմավարության կարևորությունը

Եթե մեկը ցանկանում է մի բանի հասնել, այդ նպատակին հասնելու հնարավորություններն ամենամեծը կլինեն, եթե նա օգտագործի իրեն հասանելի ռեսուրսներն ու լծակները առավելագույն արդյունավետությամբ: Դա նշանակում է՝ ունենալ ռազմավարական պլան, որը ցույց կտա՝ ինչպես շարժվել ներկայից (պահը, երբ նպատակն իրագործված չէ) դեպի ապագա (պահը, երբ հասել եք նպատակին): Ռազմավարություն մշակելը նշանակում է գծագրել գործողության հետագիծ, որն ամենահավանականն է ներկայից ապագայի ցանկալի իրավիճակին հասնելու համար:

Օրինակ, եթե մեկն ուզում է ճամփորդել մի տեղից մյուսը, նա պետք է նախապես պլանավորի, թե դա ինչպես է անելու՝ քայլելով և, գնացքով և գնալու, մեքենայով, թե՞ ինքնաթիռով: Նույնիսկ դա որոշելուց հետո պլանը հեռու է լիակատար լինելուց: Եթե ճամփորդությունը երկար է, մարդը պետք է որոշի, թե որտեղ է քնելու և սնվելու, արդյոք պահանջվում են ճամփորդական փաստաթղթեր, անձնագրեր և վիզաներ, և եթե այո, ապա որքան կտևի դրանց ձեռքբերումը: Արդյոք կարիք կա՞ ճամփորդության ժամանակ իր բացակայությամբ իրեն փոխարինելու հարց լուծել:

Նմանատիպ մտածելակերպն ու պլանավորումը, որը շատերն իրականացնում են իրենց առօրյա կյանքը կազմակերպելու համար, պետք է նաև որդեգրվեն սոցիալական և քաղաքական շարժումների ղեկավարների կողմից: Ցավոք, սակայն,

նման շարժումներում ռազմավարական պլանավորմանը հազվադեպ է արժանի ուշադրություն հատկացվում:

Որոշ մարդիկ միամտորեն կարծում են, որ եթե պարզապես իրենց նպատակը հաստատապես, ուժգին և երկարատև պնդեն, այն ինչ-որ կերպ կիրագործվի: Շատերն էլ ենթադրում են, որ եթե իրենց սկզբունքներին և իդեալներին հավատարիմ մնան՝ իրենց հակառակորդին ապացուցելով դրանք, ապա ավելին անելու կարիք չի լինի նպատակներին հասնելու համար: Ցանկալի նպատակների պնդումը և իդեալներին հավատարիմ մնալը գովելի են, սակայն մեծապես անբավարար են ստատուս քվոն փոխելու և նպատակներին հասնելու համար:

Անշուշտ, հասարակությունը փոխելու կամ փոփոխությունները կանխելու, արտաքին բռնագավթումը վերացնելու կամ հասարակությունը հարձակումից պաշտպանելու նպատակները բոլորն էլ շատ ավելի բարդ առաջադրանքներ են, քան ինչ-որ ճամփորդություն պլանավորելը: Սակայն հազվադեպ է պատահում, որ նման նպատակներ ունեցող մարդիկ լիովին գիտակցեն գործելուց առաջ համալիր ռազմավարական պլան նախապատրաստելու ծայրահեղ անհրաժեշտությունը:

Շատ հաճախ սոցիալական և քաղաքական շարժումներում ներգրավված անձինք և խմբերը գիտակցում են, որ կարիք ունեն պլանավորելու իրենց գործողությունները, սակայն դա անում են շատ սահմանափակ, կարճաժամկետ կամ միայն տակտիկական մասով: Նրանք փորձ չեն կատարում ձևակերպելու ավելի լայն, ավելի երկարաժամկետ գործողության ռազմավարական պլան: Նրանք միգուցե դրա անհրաժեշտությունն էլ չեն տեսնում: Նրանք նաև միգուցե անկարող են այդ ուղղությամբ մտածել և վերլուծել: Կամ միգուցե իրենց շարունակաբար թույլ են տալիս շեղվել ավելի լայն նպատակից և կենտրոնանալ ավելի փոքր խնդիրների վրա՝ շարունակաբար արձագանքելով հակառակորդի նախաձեռնություններին և տենդագին կերպով աշխատելով կարճաժամկետ գործողությունների վրա: Նրանք կարող է ժամանակ և էներգիա չտրամադրեն դեպի իրենց նպատակն ուղղորդող ռազմավարություն կամ մի քանի այլընտրանքային ռազմավարություններ պլանավորելուն:

Երբեմն էլ, պետք է ընդունենք, որ մարդիկ իրենց նպատակին հասնելու ռազմավարություն չեն գծում, քանի որ հոգու խորքում նրանք չեն հավատում, որ հնարավոր է հասնել իրենց նպատակներին: Նրանք իրենց թույլ են զգում, գերհզոր ուժերի զոհ են իրենց համարում ու մտածում են, որ լավագույնը, որ կարող են անել, դա պնդելն ու ապացուցելն է կամ նույնիսկ մեռնելը՝ հանուն իրենց ճշմարտացիության: Արդյունքում իրենց նպատակին հասնելու համար նրանք նույնիսկ չեն էլ փորձում մտածել ու պլանավորել ռազմավարական կերպով:

Ռազմավարական պլանավորում չանելու այսպիսի ձախողումների արդյունքն այն է, որ հաջողության հասնելու հնարավորությունները սաստիկ նվազում են և երբեմն էլ՝ իսպառ վերանում: Փոշիանում է նաև մարդկանց ուժը, նրանց գործողությունները

դառնում են անարդյունավետ, գոհողությունները վատնվում են ու չեն ծառայում մարդկանց նպատակին: Ռազմավարական պլանավորման հարցում ձախողումը հանգեցնում է վերջնական նպատակին հասնելու ձախողմանը:

Առանց պայքարի մանրակրիտ ռազմավարական պլանի ձևակերպման՝ տեղի է ունենում հետևյալը.

- պայքարողի էներգիան շեղվում է դեպի ավելի փոքր խնդիրներ և օգտագործվում է անարդյունավետորեն,
- հակառակորդի նախաձեռնություններն են վճռում իրադարձությունների ընթացքը,
- նպատակներն առաջ մղելու հնարավորությունները մնում են չօգտագործված,
- պայքարողների թույլ կողմերը շատանում են և վճռորոշ դառնում նպատակին հասնելու փորձերում,
- նպատակին հասնելու ջանքերը հաջողության հասնելու շատ քիչ շանս են ունենում:

Իսկ հիանալի ռազմավարությունների ձևակերպումն ու իրագործումը հաջողության հասնելու հնարավորությունները մեծացնում են: Ռազմավարական պլանին համաձայն ուղղորդված գործողությունները թույլ են տալիս կենտրոնացնել ուժերը և գործողությունները մղել նպատակադրված ուղղությամբ: Դրանք կարող են ուղղված լինել հիմնական նպատակներին ծառայելուն և հակառակորդի թուլությունները մեծացնելուն: Զոհերի և այլ վնասների հավանականությունը նվազում է, իսկ գոհողությունները շարունակում են ծառայել հիմնական նպատակին՝ ավելի արդյունավետորեն: Այսպիսով մեծանում է ոչ-բռնի պայքարի՝ հաջողության հասնելու հնարավորությունը:

Խելացի ռազմավարությունների ձևակերպումը

Խելացի ռազմավարություն ընտրելու կամ ձևակերպելու գործընթացը պահանջում է հետևյալը.

- այն համատեքստի ճշգրիտ և ամբողջական ընկալում, որտեղ մղվում է պայքարը,
- ներկայիս և ապագայում հաստատվելիք իրավիճակների բնույթների միջև տարբերության պարզում,

- նպատակներին հասնելուն խոչընդոտող և օգնող գործոնների գնահատում,
- հակառակորդի, ինչպես նաև սեփական խմբի և խոչընդոտ կամ աջակից համարվող երրորդ կողմերի ուժեղ և թույլ կողմերի գնահատում,
- պայքարի մի քանի պոտենցիալ ուղիների արժանիքների և սահմանափակումների գնահատում,
- առկա տարբերակներից կենսունակի ընտրություն կամ բոլորովին նոր ռազմավարության մշակում,
- գործողությունների պլանի մշակում, որը կսահմանի, թե հիմնական նպատակին հասնելու համար ինչ փոքր (մարտավարական) պլաններ և գործողություններ պետք է ձեռնարկվեն (այսինքն՝ ինչ կոնկրետ, տեղայնացված կամ կարճաժամկետ քայլեր պետք է ձեռնարկվեն մեծ ռազմավարական պլանն իրագործելու համար):

Պլանավորման և գործողության մակարդակները

Ռազմավարական պլան մշակելիս պետք է հասկանալ, որ կան պլանավորման և գործողության տարբեր մակարդակներ: Ամենաբարձր մակարդակում հիմնական ռազմավարությունն է, այնուհետև հենց ինքը՝ ռազմավարությունը, որից հետո մարտավարությունն է և մեթոդները:

Հիմնական ռազմավարությունը (grand strategy) այն ընդհանուր գաղափարն է, որը ծառայում է ազգին կամ այլ խմբին հասանելի և նպատակահարմար բոլոր ռեսուրսները (տնտեսական, մարդկային, բարոյական, քաղաքական, կազմակերպչական և այլն) համակարգելուն և ուղղորդելուն, որպեսզի իրագործվեն նրանց նպատակները:

Հիմնական ռազմավարության մեջ պետք է հաշվի առնվի պայքարի ճշմարտացիությունը, իրավիճակի վրա ազդող այլ գործոնների գնահատումը, և պայքարի ձևի ընտրությունը (ասենք՝ ոչ-բռնի պայքար, ավանդական քաղաքականություն, պարտիզանական պատերազմ կամ սովորական պատերազմ), թե ինչպես պետք է հասնել նպատակներին և ինչ երկարատև հետևանքներ կունենա պայքարը:

Հիմնական ռազմավարությունը սահմանում է պայքարը մղելու ավելի նեղ ռազմավարությունների ընտրության շրջանակը: Պլանավորման այս մակարդակը նույնպես ենթադրում է ընդհանուր առաջադրանքների հանձնարարում որոշակի խմբերի և նրանց անհրաժեշտ ռեսուրսների բաշխում պայքարում: Ավելին, այն ենթադրում է հաշվի առնել, թե ինչպես պայքարն ինքը կառնչվի նպատակներին հասնելուն:

Ռազմավարությունը սահմանում է, թե (բռնի կամ ոչ-բռնի) հակամարտության նպատակներին հասնելու լավագույն եղանակը որն է: Ռազմավարության խնդիրն է սահմանել՝ երբ կամ ինչպես կռվել, կամ կռվել արդյոք, թե՛ ոչ, ինչպես գրանցել առավելագույն արդյունավետություն որոշակի նպատակների հասնելու համար: Ռազմավարությունը նպատակին հասնելու առկա միջոցների պրակտիկ բաշխման, հարմարեցման և կիրառման պլանն է:

Ռազմավարության մեջ կարող են նաև ներառվել այնպիսի գործողություններ, որոնք ստեղծում են առավելություն արձանագրող ռազմավարական իրավիճակներ և որոնք ինքնին կարող են հաջողության բերել՝ առանց բաց պայքարի: Պայքարի նկատմամբ կիրառվելու դեպքում ռազմավարությունն այն տարրական գաղափարն է, թե ինչպես պետք է զարգանա պայքարը, ինչպես դրա առանձին բաղադրիչները պետք է առավելագույն կերպով հանգեցնեն համընդհանուր նպատակներին:

Ռազմավարությունը ենթադրում է որոշակի գործողությունների հավանական արդյունքների քննում, գործողությունների լայն պլանի մշակում, հակամարտության խմբերին փոքր գործողություններ հանձնարարելու պլանի մշակում, ընտրված մեթոդի հաջողության համար պահանջվող գործոնների ուսումնասիրում և հաջողությունից առավելագույն օգուտ քաղելու պլանի մշակում:

Ռազմավարությունը գործում է մեծ ռազմավարության շրջանակներում: Ռազմավարությունն իրագործելու համար կիրառվում են մարտավարություններ և գործողության մեթոդներ: Առավելագույն արդյունավետության նպատակով մարտավարությունը և մեթոդները պետք է ընտրվեն և կիրառվեն այնպես, որ իրապես նպաստեն ռազմավարության իրագործմանը և հաջողության հասնելուն:

Ոչ-բռնի պայքարի ռազմավարությունը ձևակերպելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները. սեփական նպատակները, ռեսուրսները և ուժը, հակառակորդի նպատակները, ռեսուրսները և ներուժը, երրորդ կողմերի առկա և հավանական դերակատարումը, հակառակորդի գործողությունների տարբեր հավանական ուղիներն ու միջոցները, սեփական գործողությունների տարբեր հավանական ուղիներն ու միջոցները (ինչպես պրոակտիվ, այնպես էլ՝ ռեակտիվ), պայքարի այս եղանակի հաջողության պահանջները, պայքարի դինամիկան ու փոփոխության մեխանիզմները:

Մարտավարությունը (տակտիկա) գործողության նեղ պլանն է՝ հիմնված այն գաղափարի վրա, թե ինչպես լավագույնս օգտագործել պայքարելու համար հասանելի միջոցները՝ լայն ռազմավարության մեջ սահմանված որոշակի նպատակի հասնելու համար: Մարտավարությունը ենթադրում է գործողության սահմանափակ ընթացք, որը տեղավորվում է ընդհանուր ռազմավարության մեջ, իսկ ռազմավարությունն էլ տեղավորվում է մեծ ռազմավարության մեջ: Որոշակի մարտավարությունը կարելի է ընկալել միայն որպես պայքարի ընդհանուր ռազմավարության մի մաս:

Մարտավարության խնդիրն է սահմանել, թե գործողության կոնկրետ մեթոդներն ինչպես են կիրառվելու, ինչպես են պայքարողների կոնկրետ խմբերը կոնկրետ իրավիճակներում գործելու: Մարտավարությունները որպես կանոն կիրառվում են ավելի կարճ ժամանակահատվածների կամ ավելի փոքր տարածքների (աշխարհագրական, ինստիտուցիոնալ) նկատմամբ, ավելի սահմանափակ թվով մարդկանց միջոցով, ավելի նեղ նպատակների հասնելու կամ սրանցից մի քանիսի համատեղման դեպքերում, քան ռազմավարությունները:

Մեթոդը վերաբերում է ոչ-բռնի պայքարի եղանակի շրջանակներում գործողության կոնկրետ միջոցին: Մեթոդները ներառում են գործողության բազմատեսակ ձևեր, ինչպես օրինակ՝ գործադուլների, բոյկոտների, քաղաքական անհամագործակցության բազմատեսակ ձևեր (պատմության ընթացքում կիրառված ոչ-բռնի պայքարի 198 մեթոդների մասին ավելի մանրամասն՝ տես Հավելված II-ը):

Ոչ-բռնի պայքարի համար հուսալի և արդյունավետ ռազմավարական պլանի մշակումը կախված է մեծ ռազմավարության, ռազմավարությունների, մարտավարությունների և մեթոդների մանրագնին ձևակերպումից և ընտրությունից:

Ոչ-բռնի ռազմավարության մի շարք առանցքային տարրեր

Գոյություն չունի մեկ հստակ ռազմավարություն, որը հարմար կլինի ոչ-բռնի պայքարի բոլոր դեպքերի համար: Ոչ-բռնի պայքարի եղանակը բազմատեսակ կոնֆլիկտային իրավիճակների դեպքում ընձեռում է բազմազան ռազմավարությունների մշակման հնարավորություն: Բացի այդ հնարավոր է, որ ոչ-բռնի պայքարը ներառվի մեծ ռազմավարության մեջ որպես գործողության այլ եղանակների հետ համատեղվող պայքարի ձև:

Սա, սակայն, չի նշանակում, որ ոչ-բռնի պայքարը համատեղելի է պայքարի բոլոր այլ ձևերի հետ: Օրինակ, բռնության կիրառումը ոչ-բռնի պայքարի ընթացքում վերացնում է բազմաթիվ գործընթացներ, որոնց միջոցով գործում է ոչ-բռնի պայքարի մեթոդը և այդպիսով հանգեցնում լավագույն դեպքում պայքարի անարդյունավետության, իսկ վատագույն դեպքում՝ տապալման կամ պարտության:

Սակայն ակնհայտ է, որ գործողության այնպիսի ձևերը, ինչպիսիք են փաստահավաքությունը, հրապարակախոսությունը, հանրային կրթությունը, կոչերը հակառակորդին, բանակցությունները և այլ նմանատիպ գործողությունները, կարող են օգտակար լինել ոչ-բռնի պայքարի կիրառության հարցում: Այս գործողությունները կարող են, օրինակ, զուգակցվել տնտեսական բոյկոտի կամ գործադուլների հետ:

Ոչ-բռնի պայքարի պլանավորման կարևորագույն սկզբունքներից է հետևյալը. պլանավորել պայքարն այնպես, որ հաջողությունը կախված լինի միմիայն ձեր իսկ ուժերից: Այսպիսի ուղերձ էր հղել նաև Չարլզ Սոյուարտ Փարնելը իռլանդացի

գյուղացիներին 1879-1880թթ. հարկադուլի ժամանակ. «Հույսը դրեք միայն ձեզ վրա և ուրիշ ոչ ոքի»:

Ենթադրենք՝ ոչ-բռնի հզոր պայքարը պլանավորված է և ընթացքի մեջ է, այդ դեպքում ընդունելի կլինի սահմանափակ ոչ-բռնի աջակցություն ստանալ ուրիշներից, բայց պայքարի հաղթանակը պետք է կախված լինի միմիայն պայքարողների խմբից: Նույնիսկ եթե ոչ ոք օգնություն չառաջարկի, սակայն վստահելի ռազմավարական պլան մշակված լինի, հաղթանակի հասնելու հավանականությունը մեծ է: Սակայն եթե հաջողության և պարտության պատասխանատվությունը փոխանցվել է ուրիշներին, իսկ վերջիններս հապաղում են առաջ գնալ, պայքարը կտապալվի: Ամեն դեպքում, պատասխանատու արտաքին աջակցության ի հայտ գալն ավելի հավանական է, երբ պայքարը մղում է շահագրգիռ բնակչությունը, որի գործողությունները ճիշտ են և որի ջանքերը միայն կարող են վճռել պայքարի հաջողությունը կամ ձախողումը:

Ոչ-բռնի պայքարի համար խելացի ռազմավարության և մարտավարության ձևակերպումը պահանջում է ոչ-բռնի պայքարի դինամիկայի և բնույթի լիարժեք պատկերացում: Այս մասին մանրակրկիտ քննարկում կա «Ոչ-բռնի պայքարի քաղաքականությունը» գրքում (տես՝ Հավելված III, Հավելյալ գրականություն): Կարևոր է ուշադիր լինել այն պլանների և գործողությունների զարգացումների նկատմամբ, որոնք նպաստում են պայքարին և մերժել այնպիսիք, որոնք կլիտչընդոտեն պայքարի արդյունավետությանը:

Անհրաժեշտ կլինի նաև ուշադրություն դարձնել ռազմավարական և մարտավարական նպատակներին հասնելուն նպաստող հավելյալ գործոնների նկատմամբ, ինչպիսիք են՝ բարոյահոգեբանական իրավիճակը, աշխարհագրական և ֆիզիկական առանձնահատկությունները, ժամանակը, մասնակիցների քանակն ու ուժը, ինդրի և ուժի կենտրոնացման հարաբերությունը, նախաձեռնության կենսունակությունը և գործողության կոնկրետ մեթոդների ընտրությունը:

Ռազմավարական պլանավորման կարևորությունը ոչ-բռնի պայքարում չի կարելի թերագնահատել: Այն առանցքային կարևորություն ունի սոցիալական և քաղաքական շարժումներն արդյունավետ դարձնելու հարցում: Այն չի կարող երաշխավորել, որ պայքարի նպատակները նվաճվեն, բայց միանշանակորեն ավելի հավանական է դարձնում հաջողությունը:⁶

⁶ Ոչ բռնի պայքարների պլանավորման վերաբերյալ ուղեցույցների համար տես՝ Ջին Շարփ, «Ինչպես է մղվում ոչ բռնի պայքարը. քսաներորդ դարի փորձը և քսանմեկերորդ դարի ներուժը», Բոստոն, Փորթեր Սարջենթ, 2005թ.

Գլուխ III

Բռնատիրական վարչակարգերի դեմ ոչ-բռնի պայքարի ռազմավարական պլանավորման քայլերը

Ոչ-բռնի պայքարը հակամարտություն վարելու եղանակ է անհամագործակցության և խափանող միջամտության, բողոքի սոցիալական, հոգեբանական, տնտեսական և քաղաքական մեթոդների միջոցով:

Այն տարրական մարդկային համառության կիրառման տեխնիկա է՝ սոցիալական, տնտեսական և քաղաքական հարցերում. վճռականություն ու կարողություն՝ չհամաձայնվելու, մերժելու համագործակցել, չհնազանդվելու և խափանելու: Այլ կերպ ասած՝ մարդիկ կարող են հրաժարվել անել բաներ, որ նրանց խնդրում են անել, կամ անել այնպիսի բաներ, որոնք արգելված են:

Իրենց գոյության համար բոլոր կառավարություններն էլ հենվում են մարդկանց հնազանդության և համագործակցության վրա: Երբ մարդիկ որոշում են կասեցնել կամ վերացնել համագործակցությունը, կառավարությունները մնում են առանց հենասյուների:

Ողջ մարդկային պատմության ընթացքում ոչ-բռնի պայքարը կիրառվել է տարատեսակ հակամարտություններում՝ մարդկանց հարստահարմանը դիմադրելու, դիկտատուրաներ տապալելու, օտարերկյա գավթմանը ընդդիմանալու, թիրախավորված փոքրամասնություններին պաշտպանելու և մարդկային ազատություններն ընդլայնելու համար:

Անցյալում նման պայքարները հիմնականում եղել են ինտուիցիայի, պատահականության, իմպրովիզացիայի արդյունք՝ առանց հստակորեն նպատակներ դնելու և ընկալելու, թե ինչ է անհրաժեշտ դրանց հասնելու համար:

Այս պայքարներից որոշներում նկատվել է տակտիկական (կամ կարճաժամկետ) պլանավորում, բայց շատ քչերում է առկա եղել պայքարի զարգացման և մղման մեծ ռազմավարական պլան:

Այժմ ոչ-բռնի պայքարում ներգրավված շատ խմբեր կարիք չունեն հեծանիվ հորինելու: Ոչ-բռնի պայքարի խորագնին ընկալումը, դրա մասին գիտելիքի տարածումը և ռազմավարական կամ երկարաժամկետ պլանավորումն այն դարձում են ավելի ու ավելի էֆեկտիվ:

Ռազմավարական պլանավորման տարրերը

Ոչ-բռնի պայքարը պլանավորելիս պետք է ուշադրություն դարձնել հետևյալին.

Փուլ I. նախնական գնահատում և վերլուծություն

- Ուսումնասիրել խնդրո առարկան երկու կողմերի տեսանկյունից էլ:
- Պատրաստել վերլուծություն հասարակությունում կամ երկրում առկա մշակութային, քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերի, ինչպես նաև բնակչության բաշխման մասին:
- Նախապատրաստել ռազմավարական հաշվարկ⁷, այսինքն՝ բացահայտել հակամարտող կողմերի ուժեղ և թույլ կողմերը: Սա ենթադրում է հակամարտող կողմերի ուժի աղբյուրների և աջակցության հենասյուն հանդիսացող ինստիտուտների բացահայտում, ուսումնասիրում՝ թե յուրաքանչյուր կողմը որքանով է մյուսից կախված կոնկրետ կարիքներ լուծելու համար և թե երկու կողմերը պայքարի համար մոտավորապես ինչ ուժ ունեն:
- Բացահայտել, թե հակառակորդի ուժի աղբյուրներից որոնք ամենից հեշտ և արդյունավետ կերպով հնարավոր կլինի թուլացնել կամ դադարեցնել:
- Բացահայտել և ուսումնասիրել հակամարտության երրորդ կողմերի, այդ թվում՝ «ապատիկ» լայն բնակչության հավանական դերակատարումն ու վերաբերմունքը:
- Բացահայտել այլ արտաքին գործոններ, որոնք կարող են ազդել պայքարի ընթացքի վրա՝ աշխարհագրական, եղանակային, կլիմայական, ենթակառուցվածքային և այլն:
- Բացահայտել, թե ճնշման ինչ այլ միջոցներ կարող են հանգեցնել պայքարողների նպատակներին հասնելուն:
- Ուսումնասիրել վերոհիշյալ գործոնները՝ բացահայտելու, թե արդյոք առկա պայմանները նպաստավոր են կոնկրետ ժամկետներում ոչ-բռնի պայքար մղելու համար, այդ պայմաններից որո՞նք են «կայուն», որո՞նք են

⁷ Այս եզրույթն ու հասկացությունը ոչ բռնի ռազմավարական պայքարի ոլորտ ներմուծել է Ռոբերտ Հելվին:

փոփոխական, որո՞նց վրա պայքարողները կամ նրանց հակառակորդները հնարավորություն կունենան ուղղակիորեն ազդելու:

Փուլ II. Ռազմավարության մշակում

- Մշակել պայքարի հիմնական ռազմավարություն: Սահմանել պայքարի նպատակը հստակ, կոնկրետ ձևակերպումով: Ընդհանուր հաշվարկ անել, թե ինչպես պետք է ոչ-բռնի պայքարն ընթանա այդ նպատակին հասնելու համար: Սա պայքարը մղելու, պայքարողներին հասանելի և նրանց համար նպատակահարմար բոլոր ռեսուրսների համակարգման և ուղղորդման երկարաժամկետ «մաստեր պլանն» է:
- Հնարավո՞ր է հակամարտության հիմնական նպատակին հասնել մեկանգամյա գործողության արդյունքում: Եթե այո, պլանավորել դա անելու ձևը: Եթե ոչ, պայքարը պետք է միտումնավոր կերպով փուլերի բաժանվի և ներառի ավելի փոքր գործողություններ՝ ուղղված երկրորդական, բայց կարևոր նպատակներին հասնելուն:
- Պայքարի ընթացքում դրված ավելի նեղ նպատակներին հասնելու գործողությունների ռազմավարություններ մշակել: Այստեղ է, որ հիմնական ռազմավարությունը դառնում է ավելի մանրամասն ու յուրաքանչյուր գործողության դեպքում պատասխանում հետևյալ հարցերին՝ ո՞վ, ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ և ինչպե՞ս:
- Ընտրել ռազմավարությունը գործողության մեջ գցող քայլերի կարճաժամկետ մարտավարություն և առանձին մեթոդներ: Շատ կարևոր է, որ մարտավարությունն ու մեթոդներն ընտրվեն մանրակրկիտ կերպով և տեղավորվեն մեծ ռազմավարության մեջ, այսինքն՝ դրանք պետք է ընտրվեն միայն այն բանից հետո, երբ պատրաստ է հիմնական ռազմավարությունը: Ոչ-բռնի պայքարի մեթոդները կարող են ներառել ինչպես բողոքի, այնպես էլ՝ համոզելու, անհամագործակցության և միջամտության եղանակներ: Դրանցից որոշները տարբեր իրավիճակներում կարող են առավելություններ ունենալ և ավելի արդյունավետ լինել՝ կախված մեծամասամբ հիմնական ռազմավարությունից և հիմնական նպատակից, ռազմավարական հաշվարկից, և կոնկրետ գործողության խնդրից: Որոշ մեթոդներ ավելի ունակ կարող են լինել վարչակարգի ուժի աղբյուրները սահմանափակելու և դադարեցնելու, քան մյուսները:

- Ապահովել, որ ընդունված ռազմավարական պլանը ներդաշնակ լինի իր նպատակների, կիրառվելիք ճնշման ձևերի և մարտավարության ու մեթոդների հետ:

Փուլ III. Կարողությունների զարգացում

- Ապահովել, որ բնակչությունն ի վիճակի լինի իրագործել պայքարի համար ընտրված ռազմավարություններն: Եթե նրանք ի վիճակի չեն այդ անել, ապա հատուկ քայլեր պետք է ձեռնարկվեն բնակչության կարողությունը զարգացնելու համար, այլապես ռազմավարությունները պետք է փոփոխվեն:
- Ուժեղացնել այն կազմակերպությունները և հաստատությունները, որոնք հակառակորդի վերահսկողությունից դուրս են, հատկապես՝ եթե հիմնական ռազմավարությունից է բխում, որ անկախ կառույցները պայքարի ընթացքում դրսևորեն անհամագործակցություն և անհնազանդություն:
- Պլանավորել երրորդ կողմերի աջակցությունը, բայց հույսը չդնել նրանց վրա:

Փուլ IV. Բաց պայքար

- Կենտրոնացնել պայքարողների ուժերը հակառակորդի թուլությունների վրա՝ հիմնական ռազմավարությամբ նախանշված նպատակներին հասնելու համար, համաձայն մարտավարությանը և ընտրված մեթոդներին, և հատկապես ուշադրություն դարձնելով հակառակորդի ուժի աղբյուրները սահմանափակելու և դադարեցնելու վրա:
- Ապահովել, որ ռազմավարական պլանը կիրառվի կարգապահորեն, առանց բռնության, հակառակ դեպքում պայքարը կարող է թուլանալ:
- Ապահովել, որ պայքարի գործողություններն օգնեն հզորացնելու պայքարողներին:
- Ապահովել, որ պայքարողներին հասանելի լինեն կրիտիկական ռեսուրսները:
- Հակառակորդներին հավասարակշռությունից հանել:
- Չհնազանդվել հակառակորդի ճնշումներին և հավատարիմ մնալ սեփական պայքարի նախանշած ձևին:

- Գործել, ոչ թե հակազդել: Դրսևորել նախաձեռնողականություն և որսալ պահիր: Պայքարը պետք է մղվի ոչ թե հակառակորդի, այլ պայքարող խմբի խաղի կանոններով:
- Մշտապես գնահատել և վերաբժնորել պայքարի ընթացքը՝ համեմատելով այն ռազմավարական պլանի հետ:

Փուլ V. Հակամարտության ավարտ

- Հաջողություն՝ ւն, ձախողո՞ւմ, թե՞ խառն արդյունքներ:
- Հակամարտությունից հետո գնահատում իրականացնել և պլանավորել հետագա քայլերը:

Մրանք ռազմավարական ոչ-բռնի պայքարի կիրառման միայն բազային կետեր են:

Հավելված I

Ոչ-բռնի պայքարում կիրառվող կարևոր եզրույթների բառարան

Ազատություն (քաղաքական) (Freedom (political)) Քաղաքական իրավիճակ, որն անհատներին թույլ է տալիս ընտրել իրենց ուզածը և գործել իրենց ուզածի համաձայն, ինչպես նաև անհատներին և նրանց խմբերին թույլ է տալիս մասնակցել հասարակության և քաղաքական համակարգի գործունեությանն ու որոշումների կայացմանը:

Անհամագործակցություն (Noncooperation) Ոչ-բռնի պայքարի մեջ մտնող մեթոդների խոշոր կարգ, որը ենթադրում է անցանկալի անձանց, հաստատությունների կամ վարչակարգի հետ սոցիալական, տնտեսական կամ քաղաքական (կամ սրանց բոլորի) համագործակցության միտումնավոր սահմանափակում, կասեցում կամ ետպահում:

Անհամագործակցության մեթոդները բաժանվում են սոցիալական, տնտեսական (բոյկոտներ և գործադուլներ) և քաղաքական անհամագործակցության ենթակարգերի:

Աջակցության հենասյուներ (Pillars of support) Այն հաստատությունները և հասարակության շերտերը, որոնք վարչակարգին մատակարարում են անհրաժեշտ ուժի աղբյուրներով, որպեսզի վարչակարգը պահպանի կամ ընդլայնի ուժի իր կարողությունները: Աջակցության հենասյուների օրինակներ են՝ ոստիկանությունը, բանտերը, զինուժը, որոնք պատժիչ ռեսուրսներ են մատակարարում, բարոյական և կրոնական առաջնորդները, որոնք հեղինակություն (լեգիտիմություն) են մատակարարում, աշխատավորական և գործարար ու ներդրումային խմբերը, որոնք տնտեսական ռեսուրսներ են մատակարարում, ինչպես նաև քաղաքական ուժի այլ աղբյուրներ:

Բոյկոտ (Boycott) Սոցիալական, տնտեսական կամ քաղաքական անհամագործակցություն

Բռնություն (Violence) Ֆիզիկական բռնություն անձանց նկատմամբ, որն առաջ է բերում վնասվածք կամ մահ կամ նման հետևանքներով բռնության սպառնալիք կամ ցանկացած գործողություն, որի իրականացումը կախված է նման սպառնալիքից կամ բռնությունից:

Ոչ-բռնության կրոնական կամ բարոյական որոշ պատկերացումներ բռնությունը շատ ավելի լայն են սահմանում: Այս նեղ սահմանումը թույլ է տալիս նման համոզմունքներ

կրողներին շարունակել հավատարիմ մնալ սեփական համոզմունքներին և համագործակցել այն անձանց և խմբերի հետ, որոնք զուտ պրագմատիկ նպատակներով են պատրաստ կիրառել ոչ-բռնի պրակտիկաներ:

Գանգատվող խումբ (Grievance group) Բնակչության ընդհանուր խումբը, ում գանգատները հակամարտության առարկան են, որոնց համար մղվում է ոչ-բռնի պայքարը:

Գործադուլ (Strike) Գործատուների վրա ճնշում գործադրելու և տնտեսական շահ ստանալու նպատակով աշխատանքի միտումնավոր սահմանափակում կամ դադարեցում՝ հիմնականում ժամանակավորապես, իսկ երբեմն էլ՝ կառավարության վրա ճնշում գործադրելու և քաղաքական նպատակներ հետապնդելու նկատառումով:

Զիջում (Accommodation) Ոչ-բռնի պայքարում փոփոխության մեխանիզմ, երբ հակառակորդները (եթե տարբերակ ունեն) որոշում են փոխզիջման գնալ և ոչ-բռնի պայքարողների որոշ պահանջները կատարել: Զիջումը չի նշանակում, որ հակառակորդները փոխել են իրենց հայացքները, կամ նրանց ոչ-բռնի կերպով պարտադրել են փոխվել, այն տեղի է ունենում այն ժամանակ, երբ որոշվել է, որ ցանկալի է հարցի փոխզիջումային լուծումը:

Զիջումը կարող է լինել այնպիսի ազդեցությունների արդյունք, որոնք շարունակվելու դեպքում կարող էին հանգեցնել հակառակորդի համակարգի կամ վարչակարգի փոխակերպման, ոչ-բռնի հարկադրանքի ներքո գործելուն կամ կազմաքանդմանը:

Ինքնապավիհում (Self-reliance) Կարողություն՝ հարցերը սեփական ուժերով լուծելու, անկախ դատողություններ կատարելու, սեփական անձի, խմբի կամ կազմակերպության համար անկախություն, ինքնորոշում և ինքնաբավություն ապահովելու:

Կազմաքանդում (Disintegration) Ոչ-բռնի պայքարի միջոցով փոփոխության չորրորդ մեխանիզմը, երբ հակառակորդները ոչ միայն պարտադրվում են ընդունելու պայքարողների պահանջները, այլ իրենց իսկ համակարգերի կամ կառավարության կազմաքանդում է տեղի ունենում՝ զանգվածային անհամագործակցության և անհնազանդության արդյունքում: Անհամագործակցության շնորհիվ ուժի աղբյուրներն այնքան ծայրաստիճան են սահմանափակվում կամ դադարեցվում, որ հակառակորդի համակարգը կամ կառավարությունը պարզապես փլուզվում է:

Հեղինակություն (Authority) Որակ, որի շնորհիվ որոշակի անհատների և հաստատությունների դատողությունները, որոշումները, հանձնարարականները և կարգադրություններն այլոց կողմից կամավոր կերպով ընդունվում են որպես ճիշտ և հետևաբար իրականացվում են հնազանդության կամ համագործակցության միջոցով:

Հեղինակությունը քաղաքական ուժի հիմնական աղբյուրներից է, բայց լիովին չի համընկնում դրա հետ:

Հիմնական ռազմավարություն (Grand strategy) Այն լայն գաղափարը, թե ինչպես պետք է հակամարտության ժամանակ հասնել նպատակին՝ գործողության որոշակի կուրս ընտրելու միջոցով: Հիմնական ռազմավարությունը ծառայում է պայքարող խմբին հասանելի և նպատակահարմար բոլոր ռեսուրսների (մարդկային, քաղաքական, տնտեսական, բարոյական և այլն) համակարգմանը և ուղղորդմանը՝ հանուն նպատակների իրագործման:

Հիմնական ռազմավարության շրջանակներում կարող են կիրառվել մի շարք նեղ ռազմավարություններ՝ ընդհանուր պայքարի տարբեր փուլերի կոնկրետ նպատակներին հասնելու համար:

Հմտություններ և գիտելիքներ (Skills and knowledge) Քաղաքական ուժի աղբյուր: Իշխողի ուժը հիմնված է այն հմտությունների, գիտելիքների և կարողությունների վրա, որոնք տրամադրում են հասարակության անդամները և խմբերը (մարդկային ռեսուրսներ), ինչպես նաև հիմնված է առկա հմտությունների, գիտելիքների և կարողությունների ու իշխողի կարիքների հարաբերակցության վրա:

Մարդկային ռեսուրսներ (Human resources) Եզրույթ, որն այստեղ կիրառվում է ցուցանելու մարդկանց և խմբերի այն թիվը, որոնք ենթարկվում են «իշխողին» (պետությունը ղեկավարող իշխող խմբին), համագործակցում կամ աջակցում են նրան՝ իրագործելու նրա կամքը: Մարդկային ռեսուրսը ենթադրում է նաև այդպիսի մարդկանց և խմբերի համամասնությունն ընդհանուր բնակչության մեջ, նրանց կազմակերպած կառույցների թիվը, ձևերը, փոխկապակցվածությունը:

Իշխողի ուժը կախված է այս մարդկային ռեսուրսների առկայությունից, որն էլ քաղաքական ուժի աղբյուրներից մեկն է:

Մարտավարություն (Tactic) Գործողությունների նեղ պլան՝ հիմնված այն գաղափարի վրա, թե հակամարտության որոշակի փուլում ինչպես առավելագույն արդյունավետությամբ օգտագործել առկա միջոցները՝ կոնկրետ նեղ նպատակի հասնելու համար: Մարտավարությունները հիմնականում կիրառվում են հակամարտության որոշակի փուլում ավելի լայն ռազմավարությունն իրագործելու նպատակով:

Մեթոդներ (Methods) Ոչ-բռնի պայքարի տրամաբանության մեջ տեղավորվող գործողության կոնկրետ միջոցներ: Կարելի է գատել շուրջ երկու հարյուր նման մեթոդ՝ դասակարգված երեք հիմնական խմբերի՝ ոչ-բռնի բողոք և համոզում, անհամագործակցություն (սոցիալական, տնտեսական և քաղաքական) և ոչ-բռնի միջամտություն:

Նյութական ռեսուրսներ (Material resources) Մա քաղաքական ուժի աղբյուրներից մյուսն է: Եզրույթը վերաբերում է գույքին, բնական ռեսուրսներին, ֆինանսական ռեսուրսներին, տնտեսական համակարգին, հաղորդակցության և տրանսպորտի միջոցներին: Այս ռեսուրսների նկատմամբ իշխողի վերահսկողության մակարդակը կարող է հուշել, թե նա ինչ մակարդակի կամ սահմանափակության ուժ ունի:

Ոչբռնություն (կրոնական կամ բարոյական) (Nonviolence (religious or ethical))
Համոզմունքներ և վարքագիծ՝ համաձայն որոնց բռնի գործողություններն արգելվում են կրոնական կամ բարոյական նկատառումներով: Որոշ դավանանքների համաձայն՝ արգելվում են ոչ միայն ֆիզիկական բռնությունն, այլև թշնամական մտքերն ու խոսքերը: Որոշ դավանաբանական համակարգեր նույնիսկ տաժում են դրական վերաբերմունք և վարքագիծ հակառակորդների նկատմամբ կամ ընդհանրապես մերժում են հակառակորդի գաղափարը:

Նման համոզմունք կրող մարդիկ հաճախ կարող են մասնակցել ոչ-բռնի պայքարին այնպիսի մարդկանց հետ միասին, ովքեր ոչ-բռնի պայքարը մղում են զուտ պրագմատիկ նկատառումներով, իսկ կարող են նաև ընդհանրապես չմասնակցել պայքարին:

Ոչ-բռնի բողոք և համոզում (Nonviolent protest and persuasion) Ոչ-բռնի պայքարի մեթոդների բավականին մեծ խումբ, որը ներառում է ընդդիմադիր կարծիքների արտահայտման խորհրդանշական գործողություններ կամ համոզելու փորձեր (ինչպես օրինակ՝ երթեր, մոմավառություններ կամ պիկետներ): Սրանք անցնում են կարծիքի վերբալ արտահայտման մակարդակից անդին, սակայն չեն հասնում անհամագործակցության (ինչպես օրինակ՝ գործադուլն է) և ոչ-բռնի միջամտության (ինչպես օրինակ՝ նստացույցն է):

Ոչ-բռնի գործողություն (Nonviolent action) Բողոք, դիմադրություն և միջամտություն իրականացնելու ընդհանուր տեխնիկա՝ առանց ֆիզիկական բռնության գործադրման:

Նման պայքար կարող է մղվել հետևյալ տիպի գործողությունների միջոցով. ա) պարտազանցության արարքներ (acts of omission), այսինքն՝ մարդիկ հրաժարվում են կատարել այնպիսի արարքներ, որոնք սովորաբար կատարում են, կամ սովորույթ համաձայն նրանցից ակնկալվում է դրանք կատարել, կամ էլ օրենքով կամ կանոնակարգով պահանջվում է դրանք կատարել, բ) զանցառության գործողություններ (acts of commission)՝ երբ մարդիկ կատարում են այնպիսի քայլեր, որոնք ընդունված չէ անել, արգելված է օրենքով կամ կանոնակարգով, գ) երկու տիպի գործողությունների գուգակցում:

Պայքարի այս եղանակը ենթադրում է բազմատեսակ կոնկրետ մեթոդների կիրառություն, որոնք բաժանված են երեք հիմնական կարգի՝ ոչ-բռնի բողոքի և համոզելու, անհամագործակցության և ոչ-բռնի միջամտության:

Ոչ-բռնի զենքեր (Nonviolent weapons) ոչ-բռնի պայքարին հատուկ մեթոդները:

Ոչ-բռնի խռովություն (Nonviolent insurrection) Ժողովրդական քաղաքական ըմբոստություն հաստատված վարչակարգի՝ որպես կեղեքողի դեմ, զանգվածային անհամագործակցության և անհնազանդության գործողությունների միջոցով:

Ոչ-բռնի հարկադրանք (Nonviolent coercion) ոչ-բռնի պայքարի ընթացքում փոփոխության մեխանիզմ, երբ հակառակորդները պայքարողների պահանջները կատարում են սեփական կամքին հակառակ, քանի որ համատարած անհամագործակցության և անհնազանդության պատճառով իրավիճակի նկատմամբ այլևս վերահսկողություն չունեն: Այդուհանդերձ, հակառակորդները շարունակում են մնալ իրենց պաշտոններում և համակարգը դեռևս չի կազմաքանդվել:

Ոչ-բռնի միջամտություն (nonviolent intervention) Ոչ-բռնի պայքարի մեթոդների մեծ խումբ, որոնց միջոցով պայքարողները կոնֆլիկտային իրավիճակում անմիջականորեն միջամտում են հակառակորդի գործողություններին և համակարգի գործունեությանը՝ ոչ-բռնի եղանակով: Այս մեթոդները տարբերվում են ինչպես խորհրդանշական ցույցերից, այնպես էլ՝ անհամագործակցությունից: Խափանող միջամտությունը մեծամասամբ ֆիզիկական է (ինչպես նստացույցի դեպքում), բայց կարող է լինել նաև հոգեբանական, սոցիալական, տնտեսական կամ քաղաքական:

Ոչ-բռնի պայքար (Nonviolent struggle) Նպատակաուղղված հակամարտության մղում ոչ-բռնի գործողության հզոր եղանակներով՝ հատկապես վճռական և մեծ ռեսուրսներ ունեցող հակառակորդների դեմ, որոնք կարող են պատասխանել բռնաճնշմամբ:

Ոչ-բռնի ռազմավարական պայքար (Strategic nonviolent struggle) Ոչ-բռնի պայքար, որը մղվում է ռազմավարական պլանի համաձայն, որն էլ մշակվել է հակամարտության իրավիճակի, հակամարտողների ուժեղ ու թույլ կողմերի, ոչ-բռնի պայքարի բնույթի, պահանջների և կարողությունների և մասնավորապես՝ այս տեսակի պայքարի ռազմավարական սկզբունքների վերլուծության հիման վրա: Տես նաև՝ հիմնական ռազմավարություն, ռազմավարություն, մարտավարություն և մեթոդներ:

Պատժամիջոցներ (Sanctions) Բռնի կամ ոչ-բռնի պատիժներ կամ ճնշամիջոցներ, որոնք կիրառվում են կա՛մ այն դեպքերում, երբ մարդիկ չեն գործել ինչպես ակնկալվում էր իրենցից կամ ցանկալի էր, կա՛մ քանի որ մարդիկ գործել են չակնկալված կամ արգելված կերպով:

Անհնազանդության դեպքում ոչ-բռնի պատժամիջոցների կիրառումը՝ որպես պարզ պատիժ ավելի քիչ հավանական է, քան բռնի պատժամիջոցների գործադրումը, քանի որ դրանք ավելի շուտ որոշակի նպատակի հասնելու միտում ունեն:

Պատժամիջոցները քաղաքական ուժի աղբյուր են:

Ռազմավարություն (Strategy) Հիմնական ռազմավարության շրջանակներում գլխավոր փուլերից կամ գործողություններից մեկի իրականացման պլանը: Ռազմավարությունն այն հիմնարար գաղափարն է, թե կոնկրետ պայքարը ինչպես է զարգանալու, ինչպես են դրա տարբեր բաղադրիչներ միմյանց փոխլրացնելու՝ առավելագույն արդյունավետությամբ նպատակներին հասնելու համար: Ռազմավարությունը գործում է հիմնական ռազմավարության շրջանակներում: Գործողությունների մարտավարությունը և մեթոդները կիրառվում են ավելի ցածր մակարդակի վրա՝ իրագործելու պայքարի ռազմավարությունը:

Տնտեսության կանգառք (Economic shut-down) Որոշակի քաղաքի, տարածքի կամ երկրի տնտեսական գործունեության այնպիսի կասեցում, որ առաջանա տնտեսական կաթված: Շարժառիթները որպես կանոն քաղաքական են լինում: Սրան կարելի է հասնել աշխատավորների գործադուլների միջոցով՝ զուգակցված դեկավարների, տնտեսվարողների, առևտրային հաստատությունների, մանրածախ խանութպանների կողմից իրենց հաստատությունների փակումով և տնտեսական գործունեության դադարով:

Ուժի աղբյուրներ (Sources of power) Սրանք քաղաքական ուժի ակունքներն են և ներառում են՝ հեղինակությունը, մարդկային ռեսուրսները, հմտություններն ու գիտելիքները, անշոշափելի գործոնները, նյութական ռեսուրսները և սանկցիաները: Սրանք բոլորը ծագում են հասարակության միջից: Այս աղբյուրներից յուրաքանչյուրը սերտորեն փոխկապակցված է հանրության և հասարակական հաստատությունների կողմից ընդունվելու, նրանց համագործակցության և ենթարկվածության հետ: Այս աղբյուրների ուժեղ մատակարարման դեպքում է, որ իշխողը գորեղ է լինում: Եթե մատակարարումը թուլանա կամ դադարեցվի, իշխողի ուժը նույնպես կթուլանա կամ կփլուզվի:

Փոխակերպում (Conversion) Հակառակորդների տեսակետի փոփոխություն, երբ նրանք համարում են, որ ճիշտ կլինի ընդունել ոչ-բռնի պայքարողների նպատակները: Սա ոչ-բռնի պայքարի միջոցով փոփոխության չորս մեխանիզմներից մեկն է:

Փոխակերպում (Conversion) Հակառակորդների տեսակետի փոփոխություն, երբ նրանք համարում են, որ ճիշտ կլինի ընդունել ոչ-բռնի պայքարողների նպատակները: Սա ոչ-բռնի պայքարի միջոցով փոփոխության չորս մեխանիզմներից մեկն է:

Փոփոխության մեխանիզմներ (Mechanisms of change) Գործընթացներ, որոնց միջոցով ոչ-բռնի պայքարը հաջողությամբ հասնում է փոփոխության: Փոփոխության չորս մեխանիզմներն են՝ փոխակերպումը, զիջումը, ոչ-բռնի պարտադրանքը և կազմաքանդումը:

Քաղաքական բացահայտ անհնազանդություն (Political defiance) ոչ-բռնի պայքարի կիրառության ռազմավարական եղանակ՝ հանուն դիկտատուրայի կազմաքանդման և դրա՝ ժողովրդավարական համակարգով փոխարինման:

Անհամագործակցության և անհնազանդության միջոցով այս դիմադրությունը կեղեքված բնակչության ուժը մոբիլիզացնում է, որպեսզի սահմանափակի և կտրի դիկտատորի ուժի աղբյուրները: Ուժի այդ աղբյուրները գալիս են այն խմբերից ու հաստատություններից, որոնք անվանվում են «աջակցության հենասյուններ»:

Երբ քաղաքական բացահայտ անհնազանդությունը հաջողությամբ է կիրառվում, այն կարող է ներկայիս կամ ապագայի ցանկացած դիկտատորի համար հասարակությունը դարձնել անենթարկելի, ուստի այն կարող է դեմոկրատական համակարգը պահպանել հետագա հավանական նոր վտանգներից:

Քաղաքացիական անհնազանդություն (Civil disobedience) Որոշակի օրենքների, կարգադրությունների, կանոնակարգերի, հրամանագրերի, ոստիկանական կամ ռազմական հրամանների և նմանատիպ որոշումների միտումնավոր և խաղաղ խախտում: Որպես կանոն՝ սրանք այնպիսի օրենքներ են, որոնք ընկալվում են մարդկանց կողմից որպես ոչ բարոյական, անարդար կամ բռնակալական: Սակայն հաճախ խախտվում են կարգապահական բնույթի կամ բարոյապես չեզոք օրենքներ նույնպես՝ ի նշան կառավարության ավելի լայն քաղաքականության դեմ բողոքի:

Քաղաքացիական բաց անհնազանդություն (Civic defiance) Քաղաքական նպատակներով իրագործվող ոչ-բռնի բողոքի, դիմադրության կամ միջամտության հաստատական գործողություններ

Քաղաքացիական գործադուլ (Civic strike) Քաղաքական նպատակներով իրագործվող տնտեսական դադար: Գործադուլի դիմում են ոչ միայն աշխատավորները, այլև հատկապես ուսանողները, մասնագետները, խանութպանները, գրասենյակային աշխատողները (ներառյալ՝ կառավարության աշխատողները), վերնախավի անդամները:

Քաղաքացիական գործողություն (Civic action) Քաղաքական նպատակներով իրագործվող ոչ-բռնի գործողության հոմանիշ

Քաղաքացիական դիմադրություն (Civic resistance) Քաղաքական նպատակներով մղվող ոչ-բռնի պայքարի հոմանիշ

Քաղաքացիական ձեռնպահություն (Civic abstention) Քաղաքական անհամագործակցության գործողություններին հոմանիշ մեթոդ

Քաղաքական ջու-ջիցու (Political jiu-jitsu) Հատուկ գործընթաց, երբ ոչ-բռնի պայքարի ժամանակ փոխվում է ուժի հարաբերակցությունը: Քաղաքական ջու-ջիցուի

Ժամանակ հակառակորդի կողմից պայքարողների բռնաճնշման նկատմամբ հասարակության բացասական արձագանքը քաղաքականորեն շրջվում է հակառակորդների դեմ՝ թուլացնելով նրանց ուժային դիրքերը և ուժեղացնելով ոչ-բռնի պայքարողներին: Սա կարող է գործել միայն այն դեպքում, երբ բռնի ճնշումներին պայքարողները շարունակում են պատասխանել ոչ-բռնի դիմադրությամբ և ոչ թե հանձնվում են կամ դիմում բռնության: Հակառակորդի բռնաճնշումներն այդ դեպքում դիտվում են վատագույն կերպ:

Արդյունքում տեղի է ունենում կարծիքի փոփոխություն երրորդ կողմ հանդիսացողների, ընդհանուր առմամբ տուժող բնակչության և նույնիսկ հակառակորդի սովորական աջակիցների մոտ: Այդ փոփոխությունները կարող են հանգեցնել հակառակորդին տրամադրվող աջակցության դադարեցման և ավելի շատ աջակցության տրամադրման ոչ-բռնի պայքարողներին: Արդյունքում՝ հակառակորդներն արժանանում են լայնատարած դատապարտման, հակառակորդի շարքերում առաջանում է ներքին ընդդիմություն և ավելի մեծ դիմադրություն: Այս փոփոխությունները հաճախ կարող են հանգեցնել ուժի հարաբերակցության փոփոխության՝ հոգուտ պայքարող խմբի:

Քաղաքական ջու-ջիցուն չի գործում ոչ-բռնի պայքարի բոլոր դեպքերում: Երբ այն չկա, ուժի հարաբերակցության փոփոխությունը մեծապես կախված է լինում անհամագործակցության մակարդակից:

Քաղաքական ուժ (Political power) Հասարակության համար պաշտոնական քաղաքականություններ վճռելու և իրականացնելու համար առկա ազդեցությունների և ճնշումների ամբողջությունը: Քաղաքական ուժի կարող են տիրապետել կառավարական կառույցները կամ ընդդիմությունը՝ ընդդիմադիր խմբերի և կազմակերպությունների միջոցով: Քաղաքական ուժը կարող է անմիջականորեն կիրառվել հակամարտության ընթացքում կամ կարող է պահվել որպես պահուստային կարողություն՝ հետագա կիրառության համար:

Հավելված II

Ոչ-բռնի պայքարի 198 մեթոդ

Ոչ-բռնի պայքարի հետևյալ 198 մեթոդները բոլորն ունեն պատմական կիրառություն: Սրանց սահմանումներն ու օրինակները ներկայացված են Ջին Շարփի «Ոչ-բռնի պայքարի քաղաքականությունը, Մաս 2, Ոչ-բռնի պայքարի մեթոդները» գրքում:

Բողոքի ոչ-բռնի արտահայտման եվ համոզելու մեթոդները

Պաշտոնական հայտարարություններ

1. Հանրային ելույթներ
2. Համաձայնության կամ անհամաձայնության նամակներ
3. Կազմակերպությունների և ինստիտուտների հայտարարություններ
4. Բազմաթիվ ստորագրություններով հանրային հայտարարություններ
5. Մեղադրանքի և նպատակադրության մասին հայտարարություններ
6. Խմբային կամ զանգվածային ստորագրահավաքներ

Լայն հանրության հետ հաղորդակցություն

7. Լոզունգներ, ծաղրանկարներ, խորհրդանիշեր
8. Պաստառներ, ցուցանակներ և տեսողական ուղերձներ
9. Թռուցիկներ, բրոշուրներ և գրքեր
10. Թերթեր և ամսագրեր
11. Չայնագրություններ, ռադիո և հեռուստատեսություն
12. Ուղերձների պատկերում օդում և գետնի վրա

Խմբի ներկայացվածություն

13. Պատվիրակում
14. Ձևական պարզևատրումներ
15. Խմբային լոբինգ
16. Պիկետներ
17. Ձևական ընտրություններ

Խորհրդանշական հանրային գործողություններ

18. Դրոշների և խորհրդանշական գույների ցուցադրում
19. Խորհրդանիշերի կրում
20. Աղոթք
21. Խորհրդանշական առարկաների տարածում
22. Հագուստից հրաժարում՝ ի նշան բողոքի
23. Սեփական գույքի ոչնչացում
24. Խորհրդանշական լույսեր

25. Դիմանկարների ցուցադրություն
26. Նկարելը որպես բողոք
27. Փողոցային նոր նշաններ և անվանումներ
28. Խորհրդանշական ձայներ
29. Խորհրդանշական ձայնարկություններ
30. Կոպիտ շարժում

Ճնշումներ անձանց նկատմամբ

31. Պաշտոնյաների «հետապնդում»
32. Պաշտոնյաների ծաղր
33. Գիշերային թափառումներ

Թատրոն և երաժշտություն

34. Հումորային պարոդիաներ
35. Թատերական և երաժշտական կատարումներ
36. Երգ

Արարողություններ

37. Երթեր
38. Շքերթներ
39. Հոգևոր արարողություններ
40. Ուխտագնացություն
41. Ավտոերթեր

Մահացածների մեծարում

42. Քաղաքական սուգ
43. Ձևական թաղումներ
44. Ցուցադրական թաղումներ
45. Հարգանքի տուրք գերեզմանների մոտ

Հանրային հավաքներ

46. Բողոքի և համաձայնության հավաքներ
47. Բողոքի միտինգներ
48. Բողոքի քողարկված միտինգներ
49. Մասնակցային ժողովներ ու սեմինարներ

Մերժում և հրաժարում

50. Ցուցադրական հեռացում
51. Լռություն
52. Հրաժարում պարզևներից
53. Մեջքով կանգնել

Սոցիալական անհամագործակցության մեթոդներ

Մեկուսացում

54. Սոցիալական բոյկոտ
55. Ընտրովի բոյկոտ
56. Հրաժարում սեռական կյանքից
57. Հրաժարում հաղորդակցվելուց
58. Հրաժարում հոգևոր ծառայությունից

Անհամագործակցություն կառույցների հետ սոցիալական և ավանդական միջոցառումների հարցում

59. Հանրային և սպորտային գործունեության դադարեցում
60. Սոցիալական հարցերի բոյկոտ
61. Դասադուլներ
62. Սոցիալական անհնազանդություն
63. Սոցիալական հաստատություններից հեռացում

Հեռացում սոցիալական համակարգից

64. Հրաժարում տնից դուրս գալ
65. Ամբողջական անհատական անհամագործակցություն
66. Աշխատողների փախուստ
67. Թաքստոցներում պատսպարում
68. Կոլեկտիվ անհետացում
69. Ցուցադրական արտագաղթ

Տնտեսական անհամագործակցության մեթոդներ

Տնտեսական բոյկոտ, գործողություններ սպառողների կողմից

70. Սպառողների կողմից բոյկոտ
71. Բոյկոտի ենթակա ապրանքների չսպառում
72. Ասկետիզմի՝ ծայրահեղ խնայողականության դրսևորում
73. Հրաժարում կոմունալ վարձերը վճարելուց
74. Հրաժարում վարձակալելուց
75. Ազգային սպառողների կողմից բոյկոտ
76. Միջազգային սպառողների կողմից բոյկոտ

Գործողություններ աշխատողների և արտադրողների կողմից

77. Աշխատողների կողմից բոյկոտ

78. Արտադրողների կողմից բոյկոտ

Գործողություններ միջնորդ օղակների կողմից

79. Բոյկոտ առաքողների և սպասարկողների կողմից

Գործողություններ սեփականատերերի և ղեկավարների կողմից

80. Բոյկոտ առևտրականների կողմից

81. Գույքի վարձակալության կամ վաճառքի մերժում

82. Արտադրության դադարեցում

83. Հրաժարում արդյունաբերական օգնությունից

84. Առևտրականների գործադուլ

Գործողություններ ֆինանսական ռեսուրսներ ունեցողների կողմից

85. Բանկերում ավանդների ետվերցնում

86. Հրաժարում վարձավճարների, տուգանքների վճարումից

87. Հրաժարում պարտքի կամ տոկոսավճարների վերադարձից

88. Ֆոնդերի և վարկերի տրամադրման դադարեցում

89. Հրաժարում եկամտից

90. Հրաժարում պետական գումարներից

Գործողություններ կառավարությունների կողմից

91. Էմբարգո տեղական մակարդակում

92. Տնտեսվարողների սև ցուցակների կազմում

93. Էմբարգո միջազգային վաճառողների կողմից

94. Էմբարգո միջազգային գնորդների կողմից

95. Միջազգային առևտրային Էմբարգո

Տնտեսական անհամագործակցության մեթոդներ

Գործադուլներ

Խորհրդանշական գործադուլներ

96. Բողոքի գործադուլ

97. Կայծակնային գործադուլ

Գյուղատնտեսական գործադուլներ

98. Գյուղացիական գործադուլ

99. Գործադուլ ֆերմաների աշխատողների կողմից

Հատուկ խմբերի գործադուլներ

100. Հարկադիր աշխատանքի մերժում

101. Գործադուլ բանտարկյալների կողմից

102. Գործադուլ արհեստավորների կողմից

103. Մասնագիտական գործադուլներ

Սովորական արդյունաբերական գործադուլներ

104. Գործադուլ առանձին հաստատությունում

105. Գործադուլ արդյունաբերության որևէ ճյուղում

106. Սովորական գործադուլ

Սահմանափակ գործադուլներ

107. Մասնակի գործադուլ

108. Ընտրովի, հերթափոխային գործադուլ

109. Գործադուլ աշխատանքի արդյունավետության, դրա իրականացման արագության նվազեցման միջոցով

110. Աշխատանք «միայն ըստ կանոնների»

111. Բացակայություն աշխատավայրից «հիվանդության» պատճառով

112. Գործադուլ աշխատանքից ազատվելու միջոցով

113. Սահմանափակ գործադուլ

114. Ընտրովի գործադուլ

Գործադուլներ մի քանի ճյուղերում միաժամանակ

115. Տարածվող (վարակիչ) գործադուլ

116. Համընդհանուր գործադուլ

Գործադուլների և ընկերությունների տնտեսական շրջափակման համակցում

117. Աշխատանքի և առևտրի դադարեցում

118. Տնտեսական գործունեության դադարեցում

Քաղաքական համագործակցության դադարեցման մեթոդները

Ղեկավարության հեղինակության մերժում

119. Ղեկավարությանը նվիրվածության, աջակցության մերժում

120. Հանրային աջակցության տրամադրման մերժում

121. Դիմադրության կոչեր և գրական երկեր

Քաղաքացիների կողմից իշխանությունների հետ համագործակցության մերժում

122. Օրենսդիր մարմինների բոյկոտ

123. Ընտրությունների բոյկոտ

124. Պետական ծառայության և աշխատատեղերի բոյկոտ

- 125. Պետական ծառայությունների, գործակալությունների և այլ մարմինների բոլոր
- 126. Ինքնակամ հեռացում պետական կրթական հաստատություններից
- 127. Պետական աջակցություն ունեցող կազմակերպությունների բոլոր
- 128. Համագործակցության մերժում գործադիր մարմիններին
- 129. Փողոցներից տեղանուններով նշանների և նշագրումների հեռացում
- 130. Նշանակված պաշտոնյաներին ընդունելու մերժում
- 131. Գործող հաստատությունների լուծարման մերժում

Քաղաքացիական հնազանդության այլընտրանքները

- 132. Դժկամ և դանդաղ կոտ հնազանդում
- 133. Անհնազանդություն անմիջական ղեկավարության բացակայության դեպքում
- 134. Համընդհանուր անհնազանդություն
- 135. Քողարկված անհնազանդություն
- 136. Ժողովի կամ միտինգի ցրվելու վերաբերյալ հրամանի չկատարում
- 137. Նստացույց
- 138. Երկրից արտաքսման կամ զորակոչման մերժում
- 139. Թաքստոցներ, փախուստ և կեղծ փաստաթղթեր
- 140. Քաղաքացիական անհնազանդություն «ապօրինի» օրենքներին

Գործողություններ պետական կառույցների աշխատակազմի կողմից

- 141. Աջակցության ընտրովի մերժում կառավարության ներկայացուցիչներին
- 142. Հրահանգների փոխանցման և հաղորդակցության արգելափակում
- 143. Հաստատության աշխատանքների դանդաղեցում, խոչընդոտների ստեղծում
- 144. Ընդհանուր աղմինխստրատիվ համագործակցության մերժում
- 145. Իրավական համագործակցության մերժում
- 146. Աշխատանքի կանխամտածված անարդյունավետություն և գործադիր մարմինների հետ համագործակցության ընտրովի մերժում
- 147. Խռովություն

Գործողություններ տեղական կառավարման օղակների կողմից

- 148. «Իբրև թե» օրինական հնարքներ և ձգձգումներ
- 149. Համագործակցության մերժում պետական հաստատությունների ստորին օղակների կողմից

Միջազգային գործողություններ կառավարության կողմից

- 150. Փոփոխություններ դիվանագիտական և այլ ներկայացուցչություններում
- 151. Դիվանագիտական միջոցառումների հետաձգում կամ չեղարկում
- 152. Դիվանագիտական ճանաչումից խուսափում
- 153. Դիվանագիտական հարաբերությունների վատթարացում, սրում
- 154. Միջազգային կազմակերպություններին անդամակցության դադարեցում

- 155. Միջազգային կառույցներին անդամակցության դադարեցում
- 156. Միջազգային կազմակերպություններից հեռացում

Խաղաղ միջամտության մեթոդները

Հոգեբանական միջամտություն

- 157. Տարերքին ինքնակամ հանձնվելը /ինքնահրկիզում և այլն/
- 158. Հացադուլ
 - ա/ բարոյական ճնշման հացադուլ
 - բ/ հացադուլ-գործադուլ
 - գ/ Մաթյազբահա հացադուլ /սանսկրիտից թարգմանաբար. Մաթյա – ճշմարտություն, գրահա - պնդել/
- 159. «Հետադարձ » դատական քննություն /մեղադրյալների կողմից մեղադրողների նկատմամբ դատական գործընթաց սկսելը/
- 160. Ոչ-բռնի ճնշումների գործադրումը

Ֆիզիկական միջամտություն

- 161. Նստացույց
- 162. Կանգնած ցույց
- 163. Տրանսպորտային միջոցներով ցույց
- 164. Ցույց ջրում /ծով, գետ կամ այլ ջրային ավազան/
- 165. Քայլք տեղում
- 166. Աղոթք /միաժամանակյա, երկարատև աղոթք/
- 167. Խաղաղ երթեր, ավտոերթեր
- 168. Խաղաղ օդային թռիչքներ
- 169. Առանց բռնության ներխուժում
- 170. Առանց բռնության հակազդեցություն
- 171. Առանց բռնության խոչընդոտների ստեղծում
- 172. Առանց բռնության տարածքի գրավում

Սոցիալական միջամտություն

- 173. Նոր սոցիալական կարգի հաստատում
- 174. Հաստատությունների գերծանրաբեռնում
- 175. Ճանապարհների արգելափակում
- 176. Չդադարող ճառեր և կոչեր
- 177. Սիրողական ներկայացումներ փողոցներում և հրապարակներում
- 178. Այլընտրանքային սոցիալական հաստատություններ
- 179. Այլընտրանքային հաղորդակցության համակարգ

Տնտեսական միջամտություն

- 180. Հակադարձ գործադուլ
- 181. Աշխատանքային օրվա ավարտից հետո աշխատավայրը լքելուց հրաժարում

182. Հողատարածքների ոչ-բռնի օկուպացիա
183. Շրջափակման իրականացման/պահպանման մերժում
184. Քաղաքական նպատակներով կեղծ փողերի տպագրություն
185. Առաջնային անհրաժեշտության ապրանքների մասսայական ձեռքբերումներ՝
նախագգուշական, կանխարգելիչ նպատակներով
186. Արժեքավոր իրերի, գույքի բռնագրավում
187. Դեմփինգ
188. Ընտրովի հովանավորչություն /ընկերությունների, կազմակերպությունների/
189. Այլընտրանքային շուկաներ
190. Այլընտրանքային տրանսպորտային համակարգ
191. Այլընտրանքային տնտեսական հաստատություններ

Քաղաքական միջամտություն

192. Ադմինիստրատիվ համակարգի գերծանրաբեռնում
193. Գաղտնի գործակալների գաղտնագերծում
194. Լյուստրացիա
195. Ձերբակալվելու ուղղված կանխամտածված քայլեր
196. Քաղաքացիական անհնազանդություն «չեզոք» օրենքներին
197. Աշխատանք՝ առանց համագործակցության
198. Կրկնակի ինքնիշխանություն և զուգահեռ կառավարություն

Անկասկած՝ կիրառվել, սակայն դեռևս չեն դասակարգվել մեծ թվով այլ մեթոդներ, շատերն էլ դեռևս ապագայում են հորինվելու և դասակարգվելու մեթոդների երեք հիմնական կարգերում՝ ոչ-բռնի բողոք և համոզում, անհամագործակցություն և ոչ-բռնի միջամտություն:

Հստակ պետք է գիտակցել, որ առավելագույն արդյունավետության հնարավոր է հասնել այն դեպքում, երբ ռազմավարությունն արդեն որդեգրված է, որից հետո նոր ընտրվում են առանձին մեթոդները ռազմավարությունն իրականացնելու համար: Անհրաժեշտ է իմանալ, թե ինչ ճնշումներ պետք կլինի գործադրել նախքան գործողության կոնկրետ տեսակն ընտրելն ու այդ ճնշումը գործադրելը:

Հավելված III

Հավելյալ գրականություն

Փիթեր Ակերման և Ջեք Դյուվալ, «Ավելի զորեղ ուժ. ոչ-բռնի պայքարի հարյուր տարին», Նյու Յորք, Սեյնթ Մարտինի հրատարակչություն, 2000թ. (Peter Ackerman and Jack Duvall, *A Force More Powerful: One Hundred Years of Nonviolent Conflict*. New York: St. Martin's Press, 2000.)

Փիթեր Ակերման և Քրիստոֆեր Կրուգլեր, «Ոչ-բռնի ռազմավարական հակամարտություն. Ժողովրդի ուժի դինամիկան քսանմեկերորդ դարում», Վեստպորտ, Քրենթրիքթը և Լոնդոն, Պրեգեր, 1994թ. (Peter Ackerman and Christopher Kruegler, *Strategic Nonviolent Conflict: The Dynamics of People Power in the Twentieth Century*. Westport, Connecticut and London: Praeger, 1994.)

Ռոնալդ Մքքարթի և Ջին Շարփ, Բրեդ Բեննեթ, «ոչ-բռնի պայքար, ուղեցույց հետազոտությունների համար», Նյու Յորք, Գարլանդ հրատարակչություն, 1994թ. (Ronald McCarthy and Gene Sharp, with Brad Bennett, *Nonviolent Action: A Research Guide*. New York: Garland Publishing, 1994)

Ջին Շարփ և Բրյուս Ջենկինս, «Հակա-զինված հեղաշրջում», Բոստոն, Մասաչուսեթս, Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտ, 2003 (Gene Sharp and Bruce Jenkins, *The Anti-Coup*. Boston, Massachusetts: Albert Einstein Institution, 2003)

Ջին Շարփ, «Քաղաքացիական պաշտպանություն, ետնազմական սպառազինության համակարգ» Փրինսթոն, Նյու Ջերսի և Լոնդոն, Փրինսթոն համալսարանի հրատարակչություն, 1990թ. (Gene Sharp, *Civilian-Based Defense: A Post-Military Weapons System*. Princeton, New Jersey and London: Princeton University Press, 1990)

Ջին Շարփ, «Դիկտատուրայից դեպի դեմոկրատիա», Բանկոկ, Բիրմայում ժողովրդավարության վերականգնման կոմիտե, 1993թ. և Բոստոն, Մասաչուսեթս, Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտ, 2002թ. (Gene Sharp, *From Dictatorship to Democracy*. Bangkok: Committee for the Restoration of Democracy in Burma, 1993. Also, Boston, Massachusetts: Albert Einstein Institution, 2002)

Ջին Շարփ, «Ոչ-բռնի պայքարի քաղաքականությունը», երեք հատորով, Բոստոն, Փորթեր Սարջենթ, (1973թ. Gene Sharp, *The Politics of Nonviolent Action*. Boston: Porter Sargent, 1973. Now available only in three paperback volumes)

Ջին Շարփ, «Ուժի դերակատարումը ոչ-բռնի պայքարում», Քեյմբրիջ, Մասաչուսեթս, Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտ, 1990թ. (Gene Sharp. “The Role of Power in Nonviolent Struggle.” Cambridge, Massachusetts: Albert Einstein Institution, 1990)

Ջին Շարփ, «Սոցիալական ուժն ու քաղաքական ազատությունը» Բոստոն, Փորթեր Սարջենթ, 1980թ. (Gene Sharp. Social Power and Political Freedom. Boston: Porter Sargent, 1980)

Ջին Շարփ, «Ինչպես է մղվում ոչ-բռնի պայքարը. քսաներորդ դարի փորձը և քսանմեկերորդ դարի ներուժը», Բոստոն, Փորթեր Սարջենթ, 2005թ. (Gene Sharp, Waging Nonviolent Struggle: Twentieth Century Practice and Twenty-First Century Potential. Boston: Porter Sargent, 2005)

Ջին Շարփ՝ Ջամիլա Ռաբբիի աջակցությամբ, «Ինքնազատագրում. Դիկտատուրաներին և կեղեքման այլ ձևերին վերջ տալու պայքարի ռազմավարական պլանավորման ուղեցույց», Բոստոն, Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտ, 2010թ. (Gene Sharp with the assistance of Jamila Raqib, Self-Liberation: A Guide to Strategic Planning for Action to End a Dictatorship or Other Oppression. Boston: The Albert Einstein Institution, 2010)

Ջին Շարփ, «Ուժի և պայքարի բառարան՝ ըստ Շարփի. Հակամարտություններում քաղաքացիական դիմադրության տեխնիկական տերմինաբանություն», Նյու Յորք, Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն, 2011թ. (Gene Sharp, Sharp's Dictionary of Power and Struggle : Technical Terminology of Civil Resistance in Conflicts. New York: Oxford University Press, 2011)

Երախտիքի խոսք

Այս գրքույկի տպագրությունն իրականացվել է «Խաղաղության հետազոտությունների միջազգային ասոցիացիա» հիմնադրամի ֆինանսավորմամբ:

Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտի գիտաշխատող Հարդի Մերիմանը մեծ ներդրում է ունեցել հրապարակման նախապատրաստման գործում՝ իր խորհրդատվությամբ, տեքստային հավելումների առաջարկներով, խմբագրական հմտություններով և տպագրության կազմակերպմամբ: Ջամիլա Ռաքրբը նույնպես մեկնաբանություններ և խորհուրդներ է տրամադրել:

Առաջին գլուխը՝ «Ինչպես ստեղծել իրատեսական այլընտրանքներ պատերազմին և այլ բռնամիջոցներին», հիմնված է մի դասախոսության վրա, որն ընթերցվել է Խաղաղության հետազոտությունների ասոցիացիայի և Խաղաղության ուսումնասիրությունների, կրթության և զարգացման կոնսորցիումի համատեղ համաժողովին, Նյու Յորք նահանգի Սիենա համալսարանում 1999թ. ապրիլի 10-ին: Այս առիթով նաև Ջին Շարփին շնորհվեց Խաղաղության հետազոտություններում նվաճումներ կատարելու պարգևը:

Երախտապարտ եմ Քրիս Միլերին, Չարլզ Բլումստայնին, Լյոյդ Դյումասին, Քրելին Ստեֆենսոնին և Քեն Բրեյլերին՝ խմբագրական առաջարկների համար:

Երկրորդ գլուխը՝ «Ոչ-բռնի պայքարում ռազմավարական պլանավորման կարևորությունը» նախկինում այս տեսքով չի հրապարակվել:

Երրորդ գլուխը՝ «Բռնատիրական վարչակարգերի դեմ ոչ-բռնի պայքարի ռազմավարական պլանավորման քայլերը», վերախմբագրված տարբերակն է գեկույցի, որը ներկայացվել է ԱՄՆ Խաղաղության ինստիտուտի և ոչ-բռնի հակամարտությունների միջազգային կենտրոնի կազմակերպած համաժողովին՝ Ֆրիդոմ հաուսի հետ համագործակցությամբ, Վիրջինիա նահանգի Ուորենթոն քաղաքում, 2002թ. հունվարի 9-ին:

Առաջին հավելվածը՝ «Ոչ-բռնի պայքարի կարևոր եզրույթների բառարանը», ընտրված է Ջին Շարփի ավելի ընդարձակ աշխատությունից՝ նվիրված ոչ-բռնի պայքարին և հարակից թեմաներին առնչվող տերմինաբանությանն ու սահմանումներին. «Ուժի և պայքարի բառարան՝ ըստ Շարփի. Հակամարտություններում քաղաքացիական դիմադրության տեխնիկական տերմինաբանություն», Նյու Յորք, Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն, 2011թ. :

Երկրորդ հավելվածը՝ «ոչ-բռնի պայքարի 198 մեթոդները», հիմնված է Ջին Շարփի «Ոչ-բռնի պայքարի քաղաքականությունը» գրքի «Ոչ-բռնի պայքարի մեթոդները» երկրորդ հատորի վրա՝ տպագրված Բոստոնում, Փորթեր Սարջենթ

հրատարակչության կողմից 1973թ. և հետագա տարիներին: Գրքում մանրամասնորեն ներկայացված են յուրաքանչյուր մեթոդի սահմանումը և օրինակները: Հետագայում նմանատիպ տեքստով թռուցիկ է հրատարակվել Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտի կողմից 1990թ, որը և վերատպվել է տարբեր լեզուներով՝ այդ թվում թաի լեզվով և ռուսերեն:

Գրքույկի հայերեն թարգմանությունը հնարավոր է դարձել Ոչ-բռնի հակամարտությունների միջազգային կենտրոնի աջակցությամբ՝ Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնության շնորհիվ:

Հեղինակի մասին

Ջին Շարփը փիլիսոփայական գիտությունների դոկտոր է, Բոստոնում գտնվող Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտի ավագ գիտաշխատող: Նա բակալավրի և մագիստրոսի իր կոչումները ստացել է Օհայոյի համալսարանում, այնուհետև փիլիսոփայական գիտությունների դոկտորականը քաղաքագիտության ուղղությամբ՝ Օքսֆորդի համալսարանում: Նա նաև Դարտմուտում Մասաչուսեթսի համալսարանի քաղաքագիտության պատվավոր պրոֆեսոր է: Ջին Շարփը շուրջ երեսուն տարի Հարվարդի համալսարանի միջազգային հարաբերությունների կենտրոնում հետազոտական պաշտոններ է զբաղեցրել: Նա հեղինակ է բազմաթիվ գրքերի, այդ թվում՝ «Ոչ-բռնի պայքարի քաղաքականությունը» (1973), «Գանդին՝ քաղաքական ստրատեգը» (1979), «Սոցիալական ուժը և քաղաքական ազատությունը» (1980), «Ինչպես Եվրոպան դարձնել աննվաճելի» (1985), «Քաղաքացիական պաշտպանություն» (1990), «Դիկտատուրայից դեպի Դեմոկրատիա» (1993 և 2002), «Ինչպես է մղվում ոչ-բռնի պայքարը. քսաներորդ դարի պրակտիկան և քսանմեկերորդ դարի ներուժը» (2003): Շարփի աշխատությունները թարգմանվել են ավելի քան երեսուն լեզուներով: